№ 248 ԿԻՐԱԿԻ, 8 ՆՈՅԵՄԲԵՐԻ

1915
ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ԿԻՐԱԿԻ, 8 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 248

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6.
7 ամսվանը 6 րուբլի։
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 6 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամէնուրեք
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

BIBLIOTHÈQUE ARMÉNIENNE
VENISE S. LAZARE

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
Հայոց Դրամատիկ Ընկերութիւն
Երկուշաբթի, նոյեմբերի 9-ին, 1915 թ.
ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ
կը ներկայացնէ
Առաջին անգամ հայ բեմի վրա
ՄԵԾ ՅԱՆՑԱՒՈՐ
— ԿԱՄ —
ՍՏՐՈՒԿԸ ԵՒ ԱՆԱՌԱԿ ԿԻՆԸ
Դրամա 5 արար., Սօրօչինկով-Սամարինի, թարգմ. Վ. Միրզոյեանի։
ՄԱՍՆԱԿՑՈՒՄ Է ԱՄԲՈՂՋ ԽՈՒՄԲԸ
Սկիզբը երեկ. ճիշդ ժամը 8-ին։ ◆◆ Տեղերի գները սովորական են։
Տոմսակները ծախվում են միմիայն թատրոնի կասսայում։
Կասսան բաց է ամենայն օր առաւ. ժամը 10—2-ը և երեկ. ժամը 6—8-ը։
Ռեժիսոր՝ ՍԵՒՈՒՄԵԱՆ
Վարչութեան հերթապահ անդամներ՝ Վ. ՄԱՄՈՒԼԵԱՆ և Ե. ՋՄՇԿԵԱՆ
առ. 805. 1—1

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳ. ԸՆԿ. ԽՈՐՀՈՒՐԴԸ
սրանով յայտնում է ի գիտութիւն, թէ կիրակի, նոյեմբերի 8-ին, երեկ. ժամը 7-ին, Ընկերութեան ընթերցարանի դահլիճում (Արաս-Արաթեան հրապարակ № 7)
ՆՇԱՆԱԿՎԱԾ Է
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
հոկտեմբերի 31-ին չը կայացած ժողովի փոխարէն։ Այս ժողովը կը կայանայ անկախ ներկայ գտնվող անդամների թւից։
Զբաղմունքի առարկաներն են.
1) Կենտրոնի և ճիւղերի 1916 թ. նախահաշիւների քննութիւն և հաստատութիւն։
2) Ընկերութեան սեփական օրգան ունենալու խնդիրը։
3) Ընթացիկ հարցեր։
առ. 802. 2—2

ՀԱՅ ՕՐԻՈՐԴՆԵՐԻ ԿՈՄԻՏԷԻ
ԳՐԱՍԵՆԵԱԿԸ ՏԵՂԱՓՈԽՎԵԼ Է
Лермонтовская ул. № 12. Մուտքը բակից։
Գրասենեակը բաց է առ. 11—2 ժամը։
առ. 807. 1—1

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Ռտիշչևսկայա 13, տելեֆոն 4—21.
Ընդունելութիւն թէ կանանց և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով։
Ընդունելութիւն՝ կանանց հիւանդ. ամէն օր՝ ժ. 1—12 առ.։
Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Ցարումթինեան
Ն. Ն. Վեսելօզօրով
Վ. Ա. Ջակրժևսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ա. Ր. Ֆիշէր
Ս. Գ. Շահպարոնեանց
(հ. կ.) առ 742. 100—7

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Յ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
Նախկին օրդինատ. Մոսկվայի համալսարանի և ասիստենտ Բեռլինի համալսարանի պրոֆ. Զօգնէրի։
Ընդունում է հիւանդներին միզասեռական, սիֆիլիսի եւ կաշուի հիւանդութիւններով՝ առաւ. ժամը 10—12, երեկ. ժամը 4—6։ Սօլօլակ, Ռտիշչևսկայա փող. սեփ. տուն, № 1, հրշէջների բնակատեղիի դիմացը, տելեֆոն 10—58.
առ. (չ. ու. կ.) 806. 50—1

Բեռլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Ներքին հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԷՎՄՕԹՕՐԱԿՍՈՎ։ Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարելը լուսաւորված ՌԵՆՏԳԷՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ։ Ամեն օր՝ 9—1 ժամ. ցեր. և 5—7 ժամ. երեկոյեան։ ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ առ. ժ. 9—10 ՁՐԻ։ Бебутовская, 23. тел. 7—29.
առ. (ա. օ.) 504. 100—83

Թիֆլիսի կոյրերի Հոգաբարձութեան Ակնաբուժարանի աւագ օրդինատոր
ԲԺՇԿՈՒՀԻ
ՍՕՖԻԱ ՄԻՐԶՕՅԵԱՆ
Ընդունում է աչքի հիւանդութիւններից ամեն օր՝ ցեր. ժամը 1½-ից մինչև ժամը 3-ը։ Սերգիէվսկայա փող. № 1. Տելեֆոն № 16—67։
առ. 753. 50—17

ԲԺԻՇԿ
Շուշանիկ Նաքարեան
(Մասնագէտ կանանց հիւանդութիւնների եւ մանկաբարձութեան)
Վերադառնալով հանքային Ջրերից՝ վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը։
Ընդունում է ամեն օր՝ (առ. ժ. 1—2.
(եր. ժ. 4—6.
Հասցէն՝ Սօլօլակ, Ռտիշչևսկայա փ. № 1.
Հեռախօս 10—58.
(և. հ. կ.) առ. 634. 100—24

ԲԺԻՇԿ
ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ
Վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը՝ մասնաւորապէս կոկորդի, քթի, ականջի հիւանդութիւններով։
Առաւօտեան ժամը 10—12-ը։
Երեկոյեան » 5—7-ը։
Бебутовская ул. № 26. 3-րդ օրիորդաց գիմնազիայի կողքին։
առ. 779. 50—11

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ ԵՒ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
ՎԵՕՆՃԵԱՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ
Պլոմբ—ոսկուց, արծաթից, ֆարֆորից և այլն։ Ատամի հեռացումը առանց ցաւի։ Արհեստական ատամներ ոսկուց (առանց քիմքի) և կաուչուկից՝ կատարելագործված մեթօդով։
Ընդուն. 10—2 առաւ. 4—7 երեկ. Լերմոնտովսկայա փողոց № 1. Մուտքը պէրէուլկից։
(ա. օ.) առ. 515. 100—66

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Լ. ՏՈԼՍՏՈՅԻ հետեւեալ երկերը.
1) ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ, Թարգմ. Սուրխաթեանի . . . . . . 30 կ.
2) ԿՈՆՖՈՒՑԻՈՍ (Չինական իմաստունը), խմբագրութեամբ Լ. Ն. Տօլստոյի, կազմեց Ա. Բուլանժէ, Թարգմ. Սուրխաթեանի . . . . . . 7 կ.
3) ԱՍԱՑՈՒԱԾՆԵՐ ՄԱՀՕՄԵԴԻ, ընտրված Լ. Տօլստոյից, Թարգ. Լ. Դանիէլեանի . . . . 5 կ.
4) ՔՈՒՐԵՐԸ, Թարգ. Դանիէլեանի . 5 կ.
5) ԻՆՉՈՎ ԵՆ ԿԵՆԴԱՆԻ ՄԱՐԴԻԿ, Թարգմ. Լ. Դանիէլեանի . . . 10 կ.
6) ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ, I պրակ, Թարգմ. Ա. Մ., 30 կ.
7) ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ, II պրակ, Թարգմ. Ա. Մ., 20 կ.
Նրանք, որոնք այս գրքերից մի-մի օրինակը պահանջեն մեզանից փոքր կանխիկ ուղարկելով, կը ստանան 10% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին զեղչ չի լինի։
Հասցէն՝ Ред газ. «Мшакъ», Тифлисъ.
4. 0—7

ԶԱՐԱՄՏՈՒԹԵԱՆ ՀԵՐՈՍՆԵՐ

Զարամտութեան հերոսները չեն դադարում իրանց ինտրիգները լարել բոլոր նրանց դէմ, ովքեր փորձ են անում գործել անկախ, ինքնուրոյն, առանց հաւանութեան այն խմբակցութեան կամ բիւրոյի, որոնք ազգային գործերի տնօրէնութիւնն իրանց մենաշնորհն են համարում.

Յայտնի է, որ կառավարութիւնը մի քանի ժամանակ առաջ կարգեց Վանի շրջանի պետ գնդապետ Տէրմէնին և սա որոշեց կամաւորներից մի պահակախումբ կամ միլիցիա՝ Վանի քաղաքում և շրջանում կարգը պահպանելու և բնակիչներին ապահովացնելու կողոպտումից և աւազակների աւարառութիւնից։ Թէ Տէրմէնի նշանակումը և թէ այդ միլիցիայի կազմումը յարուցեց դժգոհութիւն այն խմբակցութեան մէջ, որ Վանի նախկին ժամանակաւոր նահանգապետ Արամի մէջ որոշ առաքինութիւններ և ակնկալութիւններ էր տեսնում, չը նայելով որ նա չէր կարողացել կազմակերպել օգնութիւն այն թշուառ 120,000 փախստականներին, որոնք փախան Վանից և շրջանից վերջին նահանջի ժամանակ և, հետեւաբար, մատնվեցին սոսկալի մահացութեան։

Այնուհետեւ, ինչպէս յայտնի է, երևան եկան թալանչիներ. որոշ մարդիկ, վստահ՝ անպատիժ մնալու՝ շնորհիւ որոշ խմբակցութեան, Իգդիրում վարձում էին ֆուրգոններ և գնում Վան, կողոպտում տներն ու բերում ծախում Իգդիրում և Երեւանում։ Այդ թալանչիների դէմ ոչ ոք, ոչ ինքն Արամը որևէ միջոց ձեռք չէին առնում։ Հետեւաբար, նոր նահանգապետ Տէրմէնի կարգադրութիւնը—կազմել հայ կամաւորներից միլիցիա՝ աւարառութիւններին վերջ դնելու և ազգաբնակութիւնը պաշտպանելու համար—պէտք է ուրախացնէ ամեն մի սրտացաւ հայի, և ամեն մի կազմակերպութիւն, որ իրան կոչված է համարում ծառայելու հայ ժողովրդին, պէտք է իր աջակցութիւնը տայ այդ բարի ձեռնարկին։ Եւ, արդարև, գտնվեցին մարդիկ, տոգորված բարի ցանկութիւններով, որոնք խոստացան աջակցել միլիցիայի պահպանութեանը և առհասարակ Վանի և շրջանի վերաշինութեանը, այսինքն աջակցելու մի շինարարական գործի։ Մարդկանց այդ շինարարական ձգտումը դուր չեկաւ որոշ խմբակցութիւնների և բիւրոների, որոնց գործունէութեան արդիւնքը մինչև այժմ քայքայումն է եղել։ Եւ ահա նրանք սկսեցին հնարել անհիմն լուրեր՝ վարկաբեկելու համար ձեռնարկը։ Հնարելով կամ չափազանցնելով մի թեթև դէպք, այն էլ տեղի ունեցած Տէրմէնի և նրա ձեռնարկից առաջ, սկսեցին գոչալ «կանգ առէք», «շինարարների արտառոց ծրագիրը տուեց իր առաջին պտուղը» և նման քսու բանսարկութիւններ։

Եւ այդպէս գոռում էին այն մարդիկ, որոնք դեռ մի ամիս առաջ, նահանջից շատ քիչ յետոյ, իրանք կոչ էին անում Արամի ղեկավարութեամբ վերադառնալ Վան և այդ ժամանակ բնաւ չէին մտածում, թէ վտանգ կարող է լինել քրդական յարձակումներից։ Իսկ վտանգը ծագեց նրանց համար միայն այն ժամանակ, երբ Տէրմէնի կազմած պահակախումբը բաղկացած չեղաւ իրանց համախոհներից՝ և մի քանի համախոհների աղաչանքը Տէրմէնին՝ իրանց յանձնել պահակախմբի ղեկավարութիւնը՝ ապարդիւն անցաւ...

Եւ ահա մի բժշկի բերանով հրապարակ նետվեց 500 նոր զոհերի սուտակասապաս հեռագիրը։

«Մշակի» երէկվայ համարում փաստերով հերքվեց այդ լուրը, որ, բարեբաղդաբար, արդիւնք է եղել միայն կուսակցական բժշկի չարամիտ ֆանտազիայի։

Թէ շինարար մարդիկ ոչ մի առնչութիւն և կապ չեն ունեցել և նրանց բնաւ մեղադրել չէր կարելի, եթէ նոյն իսկ դէպքը տեղի ունեցած լինէր, այդ մասին կը թողնենք, որ նրանք իրանք ժամանակին հանդէս գան։

Առ այժմ պէտք է ցաւ յայտնել, որ կուսակցամոլութիւնը մարդկանց դարձնում է նոյն իսկ շինծու լուրեր հնարող։

Հ. Ա.

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

6 նոյեմբերի

ՊԵՏՐՈԳՐԱԴ.— Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Կովկասեան զօրաճակատի վրա փոփոխութիւն չը կայ։

ԼՈՆԴՈՆ.—Դարդանէլում գործող բրիտանական ուժերի հրամանատարը տեղեկացնում է.

Նոյեմբերի 2-ին 52-րդ դիվիզիան գործեց չափազանց աջող, վաղօրօք պատրաստված, յարձակում թիւրքական խրամատների վրա։ Երեք ական աջողութեամբ պայթեցին թշնամու խրամատների մէջ Կրիտիայից ոչ հեռու՝ Նուլլայում։ Ապա հետիոտն գնդերը արշաւանքի ձեռնարկեցին և ձեռք բերեցին 160 եարդ խրամատ դէպի արեւելք և 120 եարդ դէպի արեւմուտք Նուլլայից։

Ձեռք ձգված խրամատները իսկոյն ամրացվեցին և զօրամասերը, զինված ռումբերով, դիմեցին դէպի մնացող խրամատները և կառուցին պատնէշներ։ Յարձակման հետ միաժամանակ մեր արտիլերիան կրակ բացեց թշնամու պահեստի զօրամասերի դէմ։

«Էդգար» յածանաւը և 2 մոնիտոր, զինված 14 դիւյմանոց թնդանօթներով, աջակցեցին կրակին, մինչև որ տեղեկութիւն ստացվեց, թէ դիրքերն ամրացվեցին։ Թիւրքաց մարտկոցները պատասխանում էին ուժեղ կրակով, բայց որովհետեւ ռումբերը չէին կպչում, պատճառեցին շատ քիչ կորուստ։ Հաբեան խրամատներում գտնվող թիւրքերը իրանց հերթին ենթարկվեցին գնդակոցիրային ու հրացանային կրակի, նաև ռումբերի. և կրեցին մեծ կորուստներ։ Թշնամին անաջող փորձեր արաւ հակայարձակման դիմելու։ Սպանվել են աւելի քան 70 թիւրք։ Վիրաւոր գերիներից մինի ասելով, 30-ից աւելի թիւրք սպանվել են պայթիւնի ժամանակ։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

6 նոյեմբ.

ՑԵՏԻՆԻԷ.— «Պրէսս Բիւրօն» հաղորդում է նոյեմբերի 3-ից.

Սանջակի մեր զօրքը, որ ենթարկվեց մի քանի անգամ թւով իրանից գերազանց թշնամու յարձակումներին, ստիպված էր ետ քաշվել դէպի Դրինայի գլխաւոր դիրքերը։ Ուժեղ ձիւնախառն մրրիկը դժուարացնում էր ամենուրեք պատերազմական գործողութիւնները։ Ամբողջ զօրաճակատների վրա տեղի էին ունենում յամառ թնդանօթային կռիւներ։

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

6 նոյեմբերի

ՊԵՏՐՈԳՐԱԴ.— Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Ֆրիդրիխշտադտից դէպի հիւսիս-արեւմուտք գերմանական զօրամասերը փորձեցին անցնել Դվինայի մեր ափը, բայց անաջող։ Հանդիպելով մեր կրակին, թշնամին ամենուրեք ստիպված էր ետ քաշվել։

Ստիրի ձախ ափում, Չարտորիյսկ երկաթուղային կայարանի շրջանում հակառակորդը ջանաց մօտենալ գետին, բայց աջողութիւն չունեցաւ։

Չարտորիյսկի շրջանում մեր զօրքերը ետ քաշվեցին Ստիրի աջ ափը, օգտվելով արտիլերիայի հզօր աջակցութիւնից, որ մինչև անգամ թոյլ չը տուեց հակառակորդին յարձակումներ գործել։

Ստիրի գետից վերև, Նովէլկա գիւղի մօտ հակառակորդը մի քանի անգամ թնդանօթաձգութիւն սկսեց մեր ափի դէմ։

ԼՈՆԴՈՆ.—Ֆելդմարշալ Ֆրենչը տեղեկացնում է. «Նոյեմբերի 4-ի գիշերը մեր զօրամասերից մինը ճեղքեց թշնամու զօրագիծը Մէսսինից դէպի հարաւ-արեւմուտք, սրախողխող անելով 30 մարդ խրամատը պաշտպանող զինւորների թւից և վերադարձաւ՝ կորցնելով մի սպանված և մի թեթև վիրաւոր և գերելով 30 հոգի»։

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

5—6 նոյեմբ.

ԲՈՒԽԱՐԷՍՏ.—Կ. Պոլսից հաղորդում են, որ պարլամենտի նոր նստաշրջանի բացման առիթով սուլթանը իր արտասանած ճառի մէջ խիստ դարձուածքներ գործածեց Ռուսաստանի հասցէին։ «Ռուսաստանի,—ասված է ճառի մէջ,—մեր այդ դարաւոր թշնամու ջանքերը մնում են ապարդիւն»։ Մնացած դաշնակիցների վերաբերութեամբ գահական ճառը խիստ դարձուածքներ չէ պարունակում։

ԹԷՀՐԱՆ.—Ներքին գործերի մինիստր նշանակվեց Ռուսաստանին կողմնակից համարվող Ֆարման-Ֆարման։

ԼՈՆԴՈՆ.—Բոլոր յունական նաւերին, բացի նրանցից, որոնք արդէն ապրանք են բեռնում, արգելված է ապրանք վերցնել անգլիական և ֆրանսիական նաւահանգիստներում ցնոր կարգադրութիւն։

Լորդերի պալատ։ Ռիբլդալը հարցրեց կառավարութեանը, թէ նա հնարաւորութիւն ունի՞ արդեօք որևէ տեղեկութիւն տալ Մերձաւոր Արևելքում նախագծված քաղաքական ծրագիրների և ձեռք բերված ռազմական աջողութիւնների մասին։ Ապա նա հարցրեց, թէ ճիշդ է այն լուրը, որ սըր Չարլզ Մօնրօն ներկայացրել է մի հաղորդագրութիւն, որի մէջ առաջարկում է ետ կանչել զօրքերին Դարդանէլից։

Լէնսդօունը հրաժարվեց պատասխանել այդ հարցապնդմանը ներկայ րոպէին, մատնանշելով որ այդօրինակ պատասխանի մէջ անպայման յիշատակվելու են Սերբիայում տիրող դրութիւնը, որ ամեն օր փոփոխվում է, նաև Յունաստանի դիրքը, որ ներկայանում է միանգամայն հանելուկային և յաւգալի՝ Գալիպոլի թերակղզու և Եգիպտոսում տիրող կացութեան մասին։ Բոլոր այդ հարցերը անկարելի է քննել առանձին այլ ռազմաբեմերում տիրող իրերի դրութիւնից։ Ինչ վերաբերում է Մօնրօյի հաղորդագրութեան, Լէնսդօունը պատասխանեց, որ ինչպէս հաղորդագրութիւնը, այնպէս և նրա մէջ բերված պատճառաբանութիւնները թեթև հանդիսացան, որպէսզի նրանց հիման վրա կարելի լինէր որևէ վճիռ յանգել այդպիսի լուրջ հարցի առիթով։ Այդ պատճառով Կիտչեներին յանձնարարված է այցելել Միջերկրական ծովը։

Ապա Լէնսդօունը ընդգծեց Պարիզում կայացած զինուորական խորհրդակցութեան կարևորութիւնը և կրկնեց Ասկվիթի յայտարարութիւնը Սերբիայի անկախութեանը վերաբերեալ։ Մատնանշելով Կորտնեյի պացիֆիստ ճառի վրա, Լէնսդօունն ասաց, որ ներկայ րոպէին անյարմար է, որ որևէ մէկը հաշտութեան մասին հարց բարձրացնէ (ծափահարութիւն)։ «Անգլիան,—ասաց Լէնսդօունը,—ստիպված էր մեծ պատերազմը սկսել և այժմ նա պակասութիւն չէ զգում ոչ նիւթական բնաւորութիւններում, ոչ արիութեան մէջ, որ հնարաւորութիւն կը տայ նրան հասցնել մինչև իր պատուաւոր ու աջողակ վախճանը»։

Այսօր Լոնդոնում և Անգլիայի ուրիշ քաղաքներում ռուսաց դրօշակի օր է։ Հարիւրաւոր տիկնայք ծախում են փոքրիկ դրօշակներ փողոցներում և հասարակական շինութիւնների մէջ։ Հանգանակութիւնն աջող է գնում։

ՊԱՐԻԶ.—Անգլիացի մինիստրները մեկնեցին Լոնդոն։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

6 նոյեմբերի

ՊԵՏՐՈԳՐԱԴ.—Հրատարակվեց ժողովրդական լուսաւորութեան մինիստրի հրահանգը, որ թոյլ է տալիս ընդունել ցուցակի մէջ յիշատակված 38 միջնակարգ առևտրական դպրոցների սաներին համալսարաններում րէալական դպրոցների աւարտողների հետ համահաւասար կերպով, այսինքն լատիներէնից քննութիւն տալուց յետոյ։

Նարօսլավի նահանգապետ ի. պ. խ. շտալմէյստեր կոմս Տատիշչևը նշանակվում է ժանդարմների առանձին կորպուսի հրամանատար, դառնալով գեներալ-մայօր և մնալով շտալմէյստեր։

Արձակվում են պաշտօնից կովկասեան հանքային ջրերի տնօրէն Տիլէնիւը և պօստ-հեռագրական գլխաւոր վարչութեան պետի օգնական Օսադչին։

ՏՕԿԻՕ.—Նոյեմբերի 4-ին Կիօտօյի պալատում կայացաւ պաշտօնական ճաշ կայսրի, պրինցների, օտարերկրեայ ներկայացուցիչների և բարձրաստիճան պաշտօնեաների ներկայութեամբ։ Ճաշի ժամանակ տեղի ունեցան հինաւուրց կրօնական պարեր։ Երեկոյեան եղաւ խնջոյք, որին ներկայ էին մօտ 3000 հրաւիրվածներ։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ «Բ. Վ.»-ն հաղորդում է. «Սերբիական միսսիայում ստացվել են տեղեկութիւններ, որ բուլգարները Նիշի մօտ, ըստ երևոյթին, կամեցել են շրջապատել Ստեփանովիչի զօրաբաժինը, բայց իրանք ընկել են ծուղակը և գլխովին սրի են քաշվել»։

◆ Վիէննայից տեղեկութիւն է ստացվել, որ շուտով արքիդուքս Եւգէնիէն նշանակվելու է Սերբիայի գրաւած մասում աւստրօ-ունգարական գեներալ-նահանգապետ։

◆ Աթէնքից հաղորդում են, որ Թագուհի Սօֆիան լուրջ պատրաստութիւններ է տեսնում մեկնելու Աթէնքից, յայտնելով որ անգլօ-ֆրանսիական նաւատորմի երևալուց և Աթէնքում զօրք հանելուց յետոյ նա իր կեանքը վտանգի մէջ կը զգայ։ Թագուհու պահանջով նաւահանգստում կանգնած է մի զրահանաւ, որ պատրաստ է լողալու դէպի Սալոնիկ կամ Պօլիս։

◆ Օդեսսայի լրագրերին յայտնում են, որ Դարդանէլի ռազմաբեմում դաշնակիցների նաւատորմը ռմբակոծում է Սարոսի ծովափը։

◆ Հիւսիսային զօրաճակատի գլխաւոր հրամանատարը դադարեցրել է 8 հրէական օրաթերթ և շաբաթաթերթ։

◆ Վիլհէլմ կայսրը եղաւ Բրէստ-Լիտօվսկում և շրջեց դիրքերը։

◆ Ռուսաց դիւանագիտական շրջաններում եղած տեղեկութիւնների համաձայն, այլևս երկիւղ չը կայ՝ թէ սերբ զօրքերը կարող են նահանջել դէպի յունական երկիրը։ Սերբ զօրքերը կարողացել են միանալ ֆրանսիացիների հետ, թէև դրութիւնը շարունակվում է մնալ չափազանց լուրջ։

◆ Գերմանացիք մեծ քանակութեամբ ռազմամթերք են հայթայթում Բուլգարիային և Թիւրքիային։

◆ Կ. Պօլիս են բերվել գերմանական ծանր թնդանօթներ։

◆ Համաձայնութեան պետութիւնները հաւաքական պահանջ էին ներկայացնելու Յունաստանին նոյեմբերի 6-ին։

◆ Բուլգարիան հետ է կանչել իր զօրքերին Յունաստանի սահմանից։

Բ Ա Ն Ա Ս Տ Ի Ր Ա Կ Ա Ն

ՔԵԶ

Մերկ դաշտի գրկին
Ջօքեց թուխպը հեզ,
Կամիմ ես կրկին
Սրտով սիրել քեզ։

Գարունը տարաւ
Երգը թռչունի,
Սիրելու ծարաւ
Կեանքն արժէք չունի՜...

Կռունկներն անցան
Անհոգ զրոյցով,
Տանջվում եմ անձայն
Կարօտից բոցով։

Աշունն—անկոչ հիւր—
Կայցելէ և մեզ...
Տանջվում ենք ի զուր
Դու ինձ, ես էլ՝ քեզ։

Շուշանիկ Կուրղինեան

ԵՍ ԵԿԱՅ ՈՂՋՈՅՆԻ

Ալէքս-ին

Եւ կարօտ և գգուանք իմ հոգում
Ես եկայ որ տեսնեմ քեզ նորից.
Դու չը կաս... վաղեմի գարունքում
Զարթնեցին և յուշեր անցեալից։

Ես կերթամ դէպ արև, նոր գարուն.
Ես եկայ ողջոյնի՝ դու չը կաս.
Մեր կեանքի անթառամ բուրմունքով
Ես գիտեմ որ անշշուկ դու կը գաս։

Գուրգէն Հայկունի

ԱՇՆԱՆ ԵՐԳԵՐԻՑ

Մէգ ու մշուշ դաշտը պատած՝
Ծառ ու ծաղիկ մեղմ կուլան,
Ծիծաղ ու երգ վաղուց լռած՝
Մահվան գրկում կը տնքան։

Էլ հովիւը ուրախ սրտով
Ոչխարը հանդ չի բերում,
Էլ երգերը լի յոյսերով
Հեռուները չեն սլանում։

ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ ՀԱՅԱՆՊԱՍՏ ԿՈՄԻՏԷՆ

«Մշակի» 246-րդ համարում մենք առաջ բերինք Շվեյցարիայի ականաւոր հասարակական, քաղաքական, գիտական անձանց կոչը յօգուտ հայերի։ Այդ անձինք միևնոյն ժամանակ կազմել են հայանպաստ մի կոմիտէ, որից երէկ մենք ստացանք հետևեալ գրութիւնը.

⁂

Ցիւրիխ, 22 հոկտ. (ն. տ.)

«Մշակ» լրագրի խմբագրութեան
Թիֆլիս

Ներփակեալ կը ստանաք 600 ֆրանկ, որ պ. Փիրանեանի տուած մի չէկով բարեհաճեցէք յանձնել Ամենայն Հայոց Կաթողիկոսի կազմած Յանձնաժողովին հայերի համար։

Ընդունեցէք իմ յարգալից ողջոյնը։

Վասն Հայանպաստ կոմիտէի՝
Կոնրադ Պեստալոցցի

⁂

Միևնոյն ժամանակ մենք ստացանք Թալվիլից, պ. Փիրանեանից հետևեալ նամակը.

«Խմբագրութեանդ հասցէով ուղարկած եմ օգոստոսի 30-ին 200 ֆր. և հոկտ. 4-ին 400 ֆր., այսօր էլ Հայանպաստ Կոմիտէն ուղարկեց 600 ֆր.։ Գումարը 1200 ֆրանկ։

«Օգտվելով «Մշակի» համարներից՝ մի քանի թղթակցութիւններ գերմաներէնի թարգմանելով լոյս տեսնել տուի տեղական թերթերում, գլխաւորապէս «Neue Zürcher Zeitung»-ում, որ մի շատ յարգված թերթ է. ապա թղթակցութիւններից մի հաւաքածոյ կազմելով 4000 օրինակ տարածվեց այն շրջաններում, ուր թերթ չի կարդացվի։ Ապա համաձայնութեան գալով Zürcherische Hülfskomite für Armenien-ի (Ցիւրիխի Հայանպաստ Կոմիտէ) հետ՝ մի վկայական ստացայ Շվէյցարիայի զանազան քաղաքներում եկեղեցիների մէջ նկարագրելու Պարսկաստանի և Թիւրքիայի հայերի կրած զրկանքն ու տառապանքը և գաղթն ի Կովկաս։

«Հանգանակութիւնը շարունակվում է և յոյս կայ, որ հետզհետէ գումարներ ուղարկվեն ձեզ Վեհ. Կաթողիկոսին հասցնելու համար։

«Հրատարակեցի այստեղ և «Die Vernichtung eines christlichen Volkes» (Քրիստոնէական մի ժողովրդի ջնջումը) գրքոյկը, որ մեծ ծաւալ ունեցաւ։

«Երջանիկ կը լինէի, եթէ կարողանայի գէթ դոյզն ծառայութիւն մատուցանել իմ խեղճ և դժբաղդ հալածեալ հայ քոյրերիս և եղբայրներիս»։

ԹՌՈՒՑԻԿ ՄՏՔԵՐ

XXIV

Անվիճելի է, որ ներկայ համաշխարհային պատերազմը բաժանել է հին աշխարհի պետութիւններին երկու կուսակցութեան։ Կան պատերազմող երկու կողմեր և երկուսին էլ համակիր ու հակակիր ոչ պատերազմող կողմեր։ Ոչ պատերազմող կողմը կազմող պետութիւնները յայտարարում են իրանց պաշտօնապէս չէզոք, սակայն պայմանական, երբ ամեն ժամ չէզոքութիւնը կարող է փոխարինվել միացմամբ այս կամ այն պատերազմող կողմին։

Ներկայ համաշխարհային պատերազմը թէ իր ընթացքով, թէ իր վախճանական ելքով ու մեծածաւալ նպատակակէտերով շօշափում է հին աշխարհի գրեթէ բոլոր պետութիւնների գոյութեան էական շահերը, այդ պատճառով էլ ամեն մի չէզոք պետութիւն կամ զինված պատրաստ սպասում է յարմար րոպէին իր պետական հեռանկարը իրագործելու կամ թէ այլ հին ու նոր հաշիւները մաքրելու։

Հեռաւոր Չինաստանը, որ ունի նորածին հասարակապետական կազմ, դարձաւ գերմանական քաղաքականութեան մի նոր առարկան՝ զինելու դաշնակիցների դէմ։ Գերմանիան, որ ճարպիկօրէն կարողանում է դաշնակիցներ որսալ, ճգնեց միապետական փառքի տենչերով տարված չինական հասարակապետութեան նախագահ Իւանշիկային համոզել, որ յարմար րոպէն հասել է չինական հասարակապետական կազմը տապալելու և կայսրութիւնը վերականգնելով՝ գահի վրա իրան Իւանշիկային բազմած տեսնելու։

Չինական յետադէմ տարրերի և փառասէր ու միապետական Իւանշիկայի համար շատ գայթակղեցուցիչ էին այդ հեռանկարը։

Նրանք սկսեցին պատրաստութիւններ տեսնել պետական յեղաշրջման համար, սակայն դաշնակից պետութիւնների միաբան և միատեսակ դիմումը չինական կառավարութեանը, այն է՝ թէ՝ անժամանակ է ներկայ որևէ համապետական ներքին հիմնական փոփոխութիւն, որ կարող է առաջ բերել անսպասելի անակնկալներ, ետ կանգնեցրեց չինական այժմեան միապետականներին իրանց պարագլուխ հասարակապետութեան նախագահի հետ՝ իրագործելու միապետութեան վերականգնումը։ Մանաւանդ Չինաստանը վախեցաւ Յապօնիայից, որ կազմ ու պատրաստ ամեն րոպէ կարող է միջամտել։

Այսպիսով Գերմանիայի ջանքերը՝ շարժել հսկայ Չինաստանը ընդհանուր խառնակութիւնը սաստկացնելու համար՝ ի դերև ելան, շնորհիւ դաշնակից պետութիւնների կըտրուկ, վճռական և ոյժի վրա (Յապօնիա) յենված առաջադրութեան չինական ներկայ հասարակապետական, սակայն հոգով միապետական բարձր կառավարութեան ու նրա նախագահին։

Երկրորդ պետութիւնը, որն նոյնպէս պէտք է փորձանքի ենթարկվէր, ինչպէս Չինաստանը շնորհիւ Գերմանիայի քաղաքականութեան յուսահատ գալարումների, է Պարսկաստանը։ Գերմանիան իր երազած փառապանծ միահեծան գերիշխանութիւնը աշխարհիս վրա չէ կարող հիմնել միմիայն իր ոյժի վրա. Գերմանիան պէտք է ունենայ նեցուկ, դաշնակից, որ ապահովէ նրա գերիշխանութեան յարատևութիւնը։

Այդ դաշնակիցը պէտք է կուլտուրապէս շատ ստոր լինի Գերմանիայից կանգնած, որպէս զի ոչ նախանձի և ոչ էլ մրցման առիթ չունենայ, միևնոյն ժամանակ դաշնակցի կապը պէտք է սերտօրէն շաղկապվի Գերմանիայի հետ. բարեկամութիւնը հիմնըված է լինելու սիրոյ վրա։ Ահա այդ տեսակէտից մահմեդական աշխարհը հանդիսանում է իբրև ամենայարմարագոյն դաշնակիցը գերմանիզմի։ Մահմեդական աշխարհը անչափ ստոր է քաղաքակրթութեան տեսակէտից գերմանականից. դրա մեծ մասը գտնվում է Գերմանիայի թշնամիների՝ Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի լծի տակ, ինքնուրոյն մահմեդական պետութիւններն էլ գտնվում են վերոյիշեալ պետութիւնների խնամակալութեան տակ։

Մարօկկօն Ֆրանսիայի հովանաւորութեան տակ է գտնվում, նաև Տունիսը, Եգիպտոսը՝ Անգլիայի, Պարսկաստանը՝ Ռուսաստանի և Անգլիայի, մնում է Թիւրքիան, որին վաղ թէ ուշ նոյնն էր վիճակվելու։

Աշխարհագրական դիրքն էլ վերոյիշեալ պետութիւնների՝ մեծապէս նպաստաւոր է Գերմանիայի համար այն դէպքում, երբ այդ մահմեդական պետութիւններն հանդէս գան ընդդէմ դաշնակիցների, ինչպէս էլ պատահեց, Թիւրքիան, առաջինը մահմեդական պետութիւններից, իբրև դաշնակից Գերմանիայի, հանդէս եկաւ ընդդէմ քառեակ համաձայնութեան։

Այժմ էլ Գերմանիան ամեն տեսակ ներելի ու աններելի միջոցների է դիմում, որ Պարսկաստանի չէզոքութիւնը ոչնչացնէ և, իբրև Թիւրքիայի ու Գերմանիայի դաշնակից, զինէ ընդդէմ Ռուսաստանի և Անգլիայի։

Եւ կարծէք թէ հանգամանքներն էլ նպաստում էին Պարսկաստանին մոլորութեան մէջ ձգելու։ Աւստրօ-գերմանական արշաւանքը Սերբիա։ Պօլիս անցնելու համար, Բուլգարիայի նետվելը պատերազմի դաշտը, իբրև դաշնակից Գերմանիայի և մանաւանդ Թիւրքիայի, բացի այդ հանգամանքներից՝ Յունաստանի և Ռումինիայի երկդիմի և կասկածելի դերը դէպի քառեակ համաձայնութեան պետութիւնները—ահա այսպիսի խոշոր քաղաքական անցքերը Մերձաւոր Արևելքում չէին կարող չը ներգործել Պարսկաստանի վրա այն մտքով, որ նա պէտք է սկսէր թեքվել դէպի գերմանօ-թիւրք դաշնակցութիւնը։ Աւելացրէք դրան նաև պարսկի տգիտութիւնը, ինքնահաւանութիւնը, կեղծիքը, շողոքորթութիւնը, ոյժի առաջ սողացումը և կաշառակերութիւնը։ Ահա թէ ինչու Պարսկաստանը նշաններ էր վերջերս ցոյց տալիս Գերմանիայի հետ մերձեցման։

Այս անգամ էլ կտրուկ և վճռական միջոցը իր անմիջական ներգործութիւնն ունեցաւ։ Ղազվինում բանակած ռուսական զօրամասերը հրաման ստացան արշաւել Թէհրանի վրա։ Դեռ զօրքերը չեն մօտեցել մայրաքաղաքին, բայց արդէն շահն և իր կառավարութիւնը մեղայ եկան Ռուսաստանի և Անգլիայի առաջ։

Այսպիսով Պարսկաստանը խաղաղվեց, իսկ Գերմանիայի քաղաքականութիւնը մի նոր դիպլոմատիական պարտութիւն էլ կրեց։ Թէ Չինաստանի և թէ Պարսկաստանի վերաբերեալ դաշնակիցների աջողութիւնը միմիայն պէտք է վերագրել այն կատեգորիկ, վերջնական միջոցներին, որոնց դիմեցին դաշնակիցները։

Միայն կարելի է ափսոսալ, թէ ինչու հէնց սկզբից չը գործադրվեցին ներգործման այդ ուղիները։

Ա. Նազարէթեան

Առուները խենթ ու խելառ
Հիմա հանդարտ կը հոսեն,
Կեանքերն, ուրախ ու խանդավառ,
Գարնան օրեր կերազեն։

Անահիտ

ՈՍԿՈՐԸ

Կոտորածը վերջացել էր։

Քար-քարի վրա չէին թողել։ Քիւրդի ու Թիւրքի աւերիչ ձեռքը ամեն տեղ թողել էր իր հետքը։

Տուն ու տեղ, սարք ու կարգ, պատ ու պատի տակ՝ շուրջ-բոլոր արիւն էր ու աւերած։

Տեղ-տեղ մարդկանց դիակներն ընկած էին, յօշոտված, սրախողխող։ Կամ աչքը չը կար, կամ ձեռքը. կամ գանգի կէսը չը կար, կամ երեսի կաշին էր քերթված։

Շները փախել էին. շները չէին ոռնում. նրանք էլ էին սարսափում, սարսափի ու ահի ոյժը այնքան մեծ, այնքան ահելի էր... նոյն իսկ տերևները չէին շարժվում, ասես՝ մի ծանր հարուած նրանց ձայնն էլ էր կըտրել։

Գիւղը դատարկվել էր, գիւղը ամայի էր։

Հեռւում, գիւղից դուրս երկու որբ՝ քոյր ու եղբայր ձեռք-ձեռքի տուած՝ առաջ էին գնում։ Նրանք չէին վախենում, չէին սարսափում։ Նրանք կորցրել էին ամեն բան, և հայր, և մայր, և եղբայր, և քոյր... էլ ինչից վախենային... Գնում էին լուռ, անխօս, միայն երբեմնակի եղբայրը կանգ էր առնում, նայում շուրջը, իսկ քոյրը նրա թևից քաշում էր, ու նորից առաջ էին գնում։

Երկուսն էլ կիսամերկ էին, ցնցոտիներով ծածկված...։

Քաղցած էին, ու... յոգնած։

Տղան յանկարծ կանգ առաւ, և ուրախութեան մի նշոյլ խաղաց նրա փոքրիկ դէմքին։

— Տես,—բացականչեց նա,—տես։

— Ի՞նչ է որ, քայլիր, գնանք, հասնենք Տօնունց գիւղը. հօ այստեղ չե՞նք մնալու։

— Չէ, չէ, մի տես, մի տես,—նորից բացականչեց տղան ու քրոջ թևից քաշելով՝ առաջ վազեց.—Տես, տես...

— Հա, ինչ է որ. շուն է, ոսկոր է կըրծում, թող կրծի։

— Չէ, չէ, ջան, քուրիկ ջան, մօտենանք, մօտենանք, ոսկոր է...,—ու նորից քաշեց քրոջ թևից, ու երկուսով առաջ անցան։

Մօտեցան։ Շունը երկու թաթով պինդ բռնել էր մի ոսկոր, կրծում էր։ Տեսնելով երկու անկոչ հիւրերին, ոսկորը աւելի մօտ քաշեց իրան ու սկսեց մռռալ։

— Տես,—բացագանչեց տղան,—տես, ոսկորը... վրան միս էլ կայ։ Ջան, քուրիկ ջան, խլի՜ր։

Եւ քոյրն էր քաղցած։ Այս անգամ և իր քաղցը և եղբօր քաղցը նրա փոքրիկ-մանուկ սրտում զարթեցրին նախանձը... Նա նախանձեց, որ շունն իսկ իր քաղցը կարող է յագեցնել, այն էլ մսոտ ոսկոր գտնելով, իսկ իրանք... անպաշտպան, անտուն, մերկ, քաղցած... որբ։

Սարսափելի, անողորմ է սովի Աստուածը։

Քոյրը մօտեցաւ շանը, հրեց։ Շունը մի պահ կանգ առաւ, նայեց երկու անկոչ հիւրերին ու յարձակվեց աղջկայ վրա։ Եղբայրը ձեռքի փայտով խփեց շանը, ու շունն ընկաւ։

Ուրախացան։ Տղան վերցրեց ոսկորը, և ուրախութեան մի նշոյլ խաղաց նրա մանուկ դէմքին։

— Տես, վրան միս կայ, միս,—բացագանչեց ու մօտեցրեց բերանին, ապա մի վայրկեան ետ քաշեց բերանից, նայեց։

Քոյրը ձեռքիցն առաւ, նայեց։ Բոլչէպէս արտասուքի կաթիլները նրան խեղդեցին։ Նա հեծկլտաց։

Ոսկորն ամուր սեղմեց մանուկ կրծքին, ապա համբոյրների անվերջ կարկուտը տեղաց շնից խլած ոսկորի վրա։

— Միս կայ՝ վրան, միս,—հազիւ զսպելով խեղդող արտասուքները, մրմնջաց աղջիկը,—ապօ ջան, ապօ...

Ու դարձաւ եղբօրը.

— Տես, մեր ապօյի ձեռքն է, տես նշանը...

Ու եղբօրը ցոյց տուեց իր նահատակ հօր ձեռքը։

Բռնեց եղբօր ձեռքը, ու... քոյր ու եղբայր առաջ անցան, բայց այս անգամ աւելի ուժեղ... Թանգագին իրը սեղմած մանուկ կրծքին։

Լևոն Գրիգորեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՃԱՇԱՐԱՆԻ ՕԳՏԻՆ

Ստացանք Ախալցիխէից, Սիմէօն ք. Տէր-Ղազարեանցի միջոցով, հանգանակված պ. Կակուլեանցի երեխայի մկրտութեան հանդէսին՝ 11 րուբլի։

ԱՅՍՕՐՎԱՅ ԺՈՂՈՎԻ ԱՌԻԹՈՎ

Այսօր, ինչպէս յայտնի է, նշանակված է Կ. Հ. Բ. Ընկ. անդամների ընդհանուր ժողովը։

Մենք ժողովի ուշադրութիւնն ենք հրաւիրում հետևեալ հարցադրումների վրա, որ ուղղում ենք խորհրդին.

1) Ինչպիսի մասնակցութիւն է ունեցել Կ. Հ. Բ. Ընկերութիւնը փախստականներին օգնելու գործում։ Որովհետև Ընկերութիւնը, շնորհիւ ներկայ վարիչների գործելակերպի, մինչև օրս մատը մատին չէ խփել հայութեան հասած այդ սոսկալի աղէտի հանդէպ և չի տուել թշուառ փախստականներին խնամելու գործի համար և ոչ մի կոպէկ, մինչդեռ Ընկերութեան հարուստ միջոցներից ամեն տարի խոշոր գումար ծախսվում են միայն գործավարութեան, դիւանական ծախքերի և ռոճիկներ տալու համար, ապա ինչով բացատրել այդ յանցաւոր անտարբերութիւնը։

2) Արդեօք Կ. Հ. Բ. Ընկ. մարմինների ընդհանուր ժողովը իրաւունք ունի հաշիւ պահանջել Ընկերութեանը կից հաստատված ժամանակաւոր Կենտրոնական Կոմիտէից, որ, ստանալով ահագին գումարներ և տաք հագուստներ փախստականների համար, մինչև օրս գլացաւ տալ փոքրիկ մանրամասն հաշիւ իր գործունէութեան մասին։

3) Ճի՞շդ է, որ երբ յիշեալ թշուառներին ցուցակագրող տիկինները դիմում են Կենտրոնական Կոմիտէին և տաք իրեր խընդրում նրանից այդ փախստականների համար (մանաւանդ որ Կոմիտէը յատկապէս Թիֆլիսում տաք իրերի հանգանակութիւն արաւ), ստանում են միայն մի պատասխան՝ «Մենք շորերն ուղարկում ենք գաւառները և քաղաքի փախստականներին չենք օգնում...»։

4) Ճի՞շդ է, որ այն դէպքում, երբ Կոմիտէը բարեհաճում է լսել խնդրատուներին և խոստանում է մարդիկ ուղարկել նրանց տունը երբ տեսնելու, կամ այդպիսիներին ուղարկում է շաբաթներ յետոյ, կամ թէ տեսնելուց յետոյ օգնութիւնը չէ տրվում երկար ժամանակ, մինչդեռ խնդրատուն քաղցից ու մերկութիւնից տառապում է...։

5) Ե՞րբ է վերջանալու այս վակխանալիան հայ փախստականներին օգնելու սուրբ և պատասխանատու գործում...

Հայ

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայկական Կենտրոնական Կոմիտէի նախագահը դիմել է Քաղաքների Միութեան կովկասեան ճիւղի լիազօրին, խնդրելով անմիջապէս 4 վագօն ալիւր ուղարկել Երևանի նահանգի տարբեր կէտերի սոված ազգաբնակութեան և փախստականների համար, 5 վագօն էլ Միութեան հիւանդանոցներում գտնվող հիւանդների համար։

—

Փախստականների համար 5000 ձեռք տաք հագուստեղէն պատրաստելու գործը Քաղ. Միութեան կովկասեան ճիւղը յանձնում է Թիֆլիսի բարեգործական կազմակերպութիւններին— Կանանց Կոմիտէին, «Մեղու» ընկ.-եան, Կովկասի Կանանց Ընկ.-եան և ուրիշներին։ Այդ արվում է նրա համար, որ աշխատանք տուվի չքաւոր կանանց, միւս կողմից էլ խուսափեն միջնորդներից։

—

Խորէն եպիսկոպոսը հեռագրում է, որ իր կարգադրութեամբ Երևան են բերված 200 որբեր Էջմիածնից և Իգդիրից։

—

Կենտրոնական Կոմիտէն իր վերջին նիստում որոշել է 500 րուբլի դնել Մեսրոպ եպիսկոպոսի տրամադրութեան տակ՝ նըպաստ տալու այն ինտելիգենտ փախստականներին, որոնք կարիքի մէջ են. 10,000 ր. տալ մասնաժողովի գանձապահ Շահնազարեանին փախստականների համար անկողիններ և տաք շորեր պատրաստելու. նոյն նպատակով 1500 ր. տալ տ. Հ. Առուստամեանին, իսկ Բագուի Հայոց Կոմիտէին ուղարկել 10,000 ր. նոյն նպատակի համար։

—

Անցեալ օրը՝ նոյեմբերի 5-ին Երևանից Թիֆլիս եկան 40 որբեր, որոնք նոյն օրը ուղարկվեցին Ղզլար։

—

Քաղաք. Միութեան լիազօր Ալ. Խատիսեանը Արմաւիրի քաղաքագլխից ստացել է մի հեռագիր, որով վերջինս յայտնում է այնտեղ եղած փախստականների համար ուղարկել 20,000 րուբլի, որից 3000 ր. խնդրում է անմիջապէս ուղարկել։

ՀՐԱՏԱՊ ՍՓՈՓԱՆՔ ՄԱՅՐ-ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԻՆ

Ուրբաթ, նոյեմբերի 6-ին, Օգոստափառ Փոխարքայ Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչի ծննդեան օրը Հայաստանի մի բեկորիկ էլ, ծնված «Հրատապ Սփոփանքում», մկրտվեց ձմեռային ապաստարանում, ստանալով Նիկողայոս անունը։ Կնքահայրութեան հրաւիրված էր «Նպաստամատոյց Ընկ.» ներկայացուցիչը։ Այդ օրը նոյնպէս բաժանվեցին մանուկներին զգեստ, ապաստարանում եղողներին քաղցրեղէն, իսկ նորածինն ու իր մայրը ստացան այն ընծաներից, ինչ տրվել էին իր նախորդ Հրատապ—նորածին մկրտվածին։

Հետզհետէ կը մկրտվեն միւս նորածինները։

Ստացված են նուէրներ.

Դրամով՝

Եկատերինէ Մատինեանից 10 ր., Մագթաղինէ Մելիք-Բարախանեանից 10 ր., հ. տէր-Նիկողայոս ք. Բուէեանից 30 ր. իր կնքով Մնացական Բունջաեանցի՝ որդու Զարուհի Տէր-Ղևոնդեան Մամիկոնեանցի հետ նշանադրութեանը հիւրերից ժողովված, Աննա Սաղաթէլեանից 5 ր., Զարուհի Սաղաթէլեան Սահակեանից 4 ր., հ. տէր-Յարութիւն ք. Ծուղուրեանից (նորածին Նիկողայոսի մկրտութեանը ստացած հանդիսականներից աջահամբոյր) 3 ր., Բարդուղիմէոս Մաղաքեանից 3 ր., Կարապետ Մաղաքեանից 2 ր., օր. Հռիփսիմէ Մաղաքեանից 5 ր., Կարապետ Օդաբաշեանից 1 ր., Նատալիա Միք. Բաբանեանից իր նորահանգուցեալ քոյր Թամարա Միք. Բաբանեանի յիշատակին 15 ր., Դերբենտից՝ հ. Տիգրան ք. Վարդանեանից 45 ր., Դերբէնտի յայտնի վաճառական հանգուցեալ Աղաջան Դադաշեանի դագաղին պսակի փոխարէն՝ Կարապետ Շահնշահեանից 25 ր., Մաղաքիա Գասպարեանից 20 ր. (գումարը 45 ր.), Ալէքսանդրոպոլից քոյրեր Սանցեաններից 5 ր., Կոստանդին Կ. Մելիք-Շահնազարեանից (Տմբլաչի Խաչան) 25 ր., բժշկ. Ե. Տէր-Նիկողոսեանից կրկին 10 ր. (որպէս զի մկրտված նորածին Նիկողայոսի մօրը իւրաքանչիւր օր տրվի կաթ և ձու)։ Թիֆլիսի ժողովարանից 200 րուբլի։

Իրերով՝

Տ. Հռիփսիմէ Գրամեանից «Հրատապ-Հրաձնի» օրօրոցի համար անկողին, տիկ. Մ. Վ. Մ-ից տղամարդու մի ձեռք նոր զգեստ, ձմեռային պալտօ և ճերմակեղէն։ Յ. Շէքէրջեանի այրուց 4 օրինակ «Մարդկային մտքի քաղջագործութիւնը կամ գործնական հոգեբանութիւն» շքեղ հրատարակութիւնից։

«Մշակի» միջոցով՝

№ 239—120 ր., № 242—20 ր., № 243—30 ր., № 245—20 ր., № 246—10 ր., № 247—25 ր. (գումարը 225 ր.)։

Տ. Նազարեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Դարձեալ գողութեան դէպք

Ղայբալի գիւղ, 3 նոյեմբ.

Գողութեան դէպքերը, որ այնքան յաճախ են պատահում թէ շրջակայ գիւղերում և թէ մանաւանդ մեզանում, վերջին ժամանակներս գիւղացիների համար ծանր դժբաղդութիւն են ստեղծել. շաբաթ չէ անցնում, որ երկու կամ երեք գողութեան դէպք չը պատահի։

Ամսիս 1-ի գիշերը գողանում են Աստուր Տէր-Առաքելեանցի եզը։ Գիւղի ծայրում եզը տանելիս գողերը հանդիպում են գիւղացիներից մէկին, որը «հարայ» տալով իմացում է տալիս գիւղին։ Գիւղացիները՝ 7 հոգի սկսում են հետապնդել գողերին. սրանք երկուսն են լինում, զինված ատրճանակներով։ Մինչև «Քիրս» կոչված սարի ստորոտը գողերին հետապնդելով, լուսաբացին, երբ արդէն մօտենում են գողերին, վերջիններս ատրճանակներից կրակելով իրանց հետապնդողների վրա՝ եզը թողնում են և անհետանում դէպի Մուսալմանլար Թուրք գիւղը։

Եզը ետ բերելով, դէպքի մասին յայտնում են Խանքենդի պրիստաւին։

Լաւ կը լինէր, եթէ կառավարութեան կողմից իւրաքանչիւր գիւղի մի քանի հրացան տրվէր՝ գողերից և ու հասարակ աւազակային յարձակումներից պաշտպանվելու համար։ Ա. Ա.

ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԸ ԲԱԳՒՈՒՄ

Արդէն գրել եմ, որ հայ փախստականները կենտրոնացված են Բագուի Հայոց Գաղութ կոչված արուարձանում։ . . . .

. . . .

Տասը բնակարան այցելեցինք մենք նոյեմբերի 1-ին և տասն անգամ տասը նեղութիւն, տառապանք ու վիշտ տեսանք։ Ի՞նչ բնակարաններ էին դրանք. կաթող տանիքներով, առանց ապակիների, առանց դռների, ինչ-որ աւերակներ, որ վառարաններ չունեն, արտաքնոցներ չունեն, խոնաւ են, մութ, անհամբոյր, բաց՝ քամիների, փոշու ու ցրտի առաջ։ Եւ խոնաւ յատակներին մի քանի լաթեր, որ անկողնի տեղ են ծառայում, անկիւններում ժանգոտած թիթեղի ամաններ, որից ուտում և խմում են, ապա մերկութիւն և ամենուրեք հիւանդներ առանց բժշկական այցելութեան, առանց դեղ ու դարմանի։ Սիրտ է ճմլվում, երբ հանդիպում ես պառաւ կանանց, որոնք պատուրված են կարկատած ցնցոտիների մէջ, տառաբոբիկ՝ այս ցուրտ և անձրևոտ օրերին և բաց կրծքերով, մաշված սրունքներով... վա՜հ, խեղճ հայ մայրեր։ . . . .

. . . .

Այլանդակվում է մեզ մօտ ապաստանած ժողովրդի բարոյական աշխարհը։ Այդ ժամերով աղմկայոյզ սպասումը ճաշարանի առջև մի բաժին ճաշ ստանալու համար, այդ պարապ վիճակը և ստորացուցիչ նըպաստը, որ կուշտ և հանգիստ ապրուստ չի պարգևում, այդ ցրումը համայնքների, ընտանիքների, ծնողների ու զաւակների,— այո, այդ բոլորը գալիս են դիմազուրկ դարձնելու թիւրքահայերին, աւերելու նըրանց հոգեկան կորովը, ...

. . . .

. . . . Եթէ սա անընդունելի է Բագուի հայերի համար, եթէ նրանք վառված են փախստականներին ֆիզիքապէս ու բարոյապէս փրկելու հաստատ ցանկութեամբ, ապա նրանք պէտք է հրաժարվեն գծուծութիւնից, պէտք է առատաձեռն լինեն, պէտք է կարեկից լինեն ոչ թէ ի ցոյց աշխարհի, այլ անկեղծ ու խոր զգացմունքով։

Այս գլխից պէտք է կանոնաւորել փախստականների բնակարանային պայմանները. ամեն ընտանիք պիտի ստանայ գոնէ մի տաք, ցրտից ու խոնաւութիւնից ապահովված սենեակ։ Հարկաւ, փախստական ընտանիքին ոչ միայն դատարկ սենեակ է հարկաւոր, այլ և տնային սարք. տաք անկողին, ամաններ, ճրագ և այլն։ Պէտք է ծածկել մարդկանց մերկութիւնը և փրկել նրանց ամօթխածութիւնը, ապա գործ, պարապմունք ճարել տղամարդկանց համար։ Եթէ այս խոշոր գործարանային քաղաքում փախստականը աշխատանքի դուռը չունենայ, կը նշանակէ, թէ ժողովրդասիրութիւն ասածդ զգացմունքը միանգամայն վերացել է հանքերի ու գործարանների հայ վարիչներից։ Փախստականների մէջ կօշկակարներ, դերձակներ և այլ արհեստաւորներ կան. պէտք է այդ մարդկանց գործիքներ մատակարարել, որ կարողանան բանեցնել իրանց արհեստը։ Եթէ փախստական տղամարդիկ աշխատանք ունենան—մի բան, որ դժուար չէ Բագւում—ապա դրանով փախստականների մեծամասնութիւնը կազատվի աղքատ ողորմելի և ստորացուցիչ խնամքից։

Իմ նախորդ թղթակցութեան մէջ գրել եմ, թէ Բագուի հայ բժիշկներն իրանց վրա են վերցրել հիւանդանոցի պահպանումը և բժշկական օգնութեան գործը։ Այժմ պիտի ասեմ, որ հայ բժիշկներին պատիւ չէ բերում այն կացութիւնը, որ տիրում է փախստականների բնակարաններում։ Ամենուրեք հիւանդ կայ, իսկ այցելու-բժիշկ չի մտնում հիւանդների դռնով։ Անհոգ է և Բագուի քաղաքային ինքնավարութիւնը։ Այսպիսով հարիւրաւոր հայ և օտար բժիշկների քթի տակ փախստականների բազմութիւնը գալարվում է հիւանդութիւնների ճիրաններում։ Ո՞վ սուրբ զոհաբերութիւն, միթէ դու իսպառ վերացել ես նաև հայ բժիշկների դասից, որ այսպէս թէ այնպէս միշտ հաղորդակից է եղել իր ժողովրդի ապրումներին...

Զգանք, որ մեր «խեղճիկ ժողովուրդը ցիրուցան է լինում անմեղ, անխորհուրդ», և եթէ թանգ է մեզ համար մեր սեփական ապահովութիւնը, ապա պատուար կանգնենք արտաքին ու ներքին աւերիչ ոյժերի դէմ...

Բագու Դ. Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Նոյեմբ. 10-ին Փոխարքայի նախագահութեամբ կայանալիք խորհրդակցութեանը մամուլի ներկայացուցիչներ չեն լինելու։

◆ Կովկասեան զինուորական հաղորդակցութիւնների կառավարիչը արգելել է նոյեմբերի 6-ից Կովկասի բոլոր կայարաններում ապրանքներ ընդունել առանց «НАРЯДЪ»-ների։ Այս կարգադրութիւնը չէ տարածվում «Կարմիր Խաչի», հասարակական կազմակերպութիւնների և զինուորական վարչութիւնների ապրանքների վրա։ Այժմ ամեն մի «նարեադ» պէտք է ստանալ զինուորական հաղորդակցութիւնների վարչութիւնից։ Մինչև հիմա նահանգապետներից և քաղաքապետներից ստացվելիք «նարեադները» ներկայացվելու են զինուորական հաղորդակցութիւնների վարչութեանը ստուգման համար։ Մարդատար գնացքների հետ թոյլատրվում է տանել ճանապարհորդների իրերը։

◆ Մօտ օրերս Զինուորական - Պատմական Թանգարանում (Փառաց Տաճարում) լինելու է բարեգործական բազար, վիճակախաղով, Ալէքսանդր II Կայսրի անուան մանկական ապաստարանի և երեխաների խնամող ընկերութեան ապաստարանների օգտին։ Այդ բարեգործական հաստատութիւնները խնամում են թշուառ երեխաներին և որբերին, որոնց թւումն են և մեր քաջարի զինուորների երեխաները։ Հէնց պատերազմի սկզբից՝ ժողովրդական ոյժերը լարված լինելու պատճառով՝ պատերազմից վնասվածներին օգնութիւն հասցնելու գործում այդ բարեգործական հիմնարկութիւնները յարմար չէին գտնում իրանց օգտին որևէ ժողովարարութիւն կազմակերպել, սակայն ներկայ ժամանակում, երբ կեանքը չափազանց թանգացել է, մանկական ապաստարանը և երեխաների հոգատար ընկերութիւնը կարիք են զգում կարեկցող մարդկանց օգնութեան, որպէս զի կարողանան պահպանել աղքատ երեխաների հոգատարութեան բարի գործը։ Բարեգործական բազար կազմակերպողները դիմում են բարի մարդկանց, խնդրելով նպաստել, ով ինչով կարող է, բազարի և վիճակախաղի կազմակերպման՝ նուիրաբերելով զանազան իրեղէններ (ձեռագործներ, քսակներ ընծաներով՝ զինուորների համար, տաք իրեղէններ և այլն), և յոյս ունեն, որ իւրաքանչիւր ոք, ով կարող է, կը նուիրէ իր լուման թշուառ որբերի օգտին։ Բոլոր նուիրաբերութիւնները շնորհակալութեամբ կընդունվեն երեխաներին հոգատար ընկերութեան նախագահուհի Ա. Վ. Վօլսկիի միջոցով (Բարեատինսկայա փողոց որբանոցական տուն) և երեխայոց ապաստարանի խնամակալուհի Ա. Պ. Պետերսոնի միջոցով (Մեծն-Պետրոսի փողոց № 4)։

◆ Քաղ. դումայի որոշումով այն իրաւասուները, որոնք երբևիցէ չեն կարող ներկայ լինել դումայի նիստերին, իրանց բացակայութեան պատճառների մասին պէտք է յայտնեն քաղաքագլխին ի գիտութիւն։

◆ Մեզ հաղորդում են, որ Աֆրիկեանների Առևտրական Տունը կեանքի թանգութեան պատճառով բոլոր գործակատարների ռոճիկը պատերազմի ընթացքում աւելացրել է 40—50%։

◆ Ինչպէս յայտնի է, Սաբուրթալոյի բնակիչները խնդրել էին, որ Սաբուրթալո արուարձանը մտցվի քաղաքի սահմանի մէջ և ջրանցք անցկացվի այնտեղ։ Այժմ քաղաքագլուխը խոստացել է սաբուրթալոցիներին, որ արուարձանը կը մտցվի քաղաքի սահմանի մէջ և ջրանցք կանցկացվի մօտ ապագայում։

◆ Հոկտեմբեր ամսվայ ընթացքում Կ. Հ. Բ. Ընկ. գրադարան-ընթերցարանը յաճախել են 4620 հոգի։ Գրադարանից վերցված է 31,915 կտոր գիրք. դրանցից 2400 հայերէն, 1195 ռուսերէն։

◆ Վրաց «Թանամեդրովի Ազրի» թերթին հեռագրում են Սարատովից, որ այնտեղ թոքախտից վախճանվել է երկրորդ Պետ. Դումայի անդամ Վիկենտի Լոմտաթիձէն։

◆ Ստացանք «Положеніе бѣженцевъ въ Александропольскомъ районѣ» գրքոյկը, որը կազմված է փախստականներին առանց ազգային խտրութեան օգնող Բագուի կոմիտէի լիազօր Յակ. Յովհաննիսեանի զեկուցումից։ Գինն է 10 կոպէկ։ Գրքոյկի վաճառքից ստացվելիք արդիւնքը մտնելու է կոմիտէի գանձարանը, նրա միջոցների ուժեղացման համար։

—

ԿՈՎԿԱՍ

◆ Մայրաքաղաքի լրագիրների ասելով, մատակարարական գործի միջնորդական խորհրդակցութիւնը որոշել է յատկացնել պետութեան ընդհանուր մատակարարական դրամագլխից 9560 ր. Կովկասի փոխարքային՝ Բագուի նահ. Ջէվադի գաւառի հեղեղից վնասված ազգաբնակութեանը օգնութիւն ցոյց տալու համար։

—

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Ներքին գործերի մինիստրութիւնը ներկայումս մշակում է օրինագծեր ոստիկանութիւնը և անցագրային կանոնադրութիւնը բարենորոգելու մասին։

◆ «Р. Сл.»-ն հաղորդում է, որ Նոբէլի մրցանակը գեղարուեստի համար ստացել է ռուս նկարիչ Բակստը։

◆ Վերջին տեղեկութիւնների համաձայն, Պետական Դումայի բացման օրը արդարադատութեան մինիստրը կարդալու է յայտագիր ընդհանուր քաղաքական բնոյթի։

◆ Թիֆլիսում հեռագիր ստացվեց, որ Կիևում վախճանվել է Վրաստանի նախկին էկզարխ՝ Կիևի միտրոպոլիտ Ֆլաւիան։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ԿԱՆԱՅՔ

Նոյեմբերի 6-ին ռուս կին գրող Ա. Վ. Տիրկովայի բանախօսութիւնը՝ «Պատերազմը եւ կանայք» թեմայով գրաւել էր լսողների մեծ թիւ. մեծամասնութիւն էին կազմում կանայք։ Կանանց հարցի ներկան կապելով պատերազմի հետ, բանախօսը նըկատեց, որ կատարվել է մեծ, նշանակալից յեղաշրջում. առաջ է եկել հասկանալու, դըրութիւնը ըմբռնելու պահանջ. մինչև այժմ միայն տնային հոգսերով զբաղված և բուլիկների մասին մտածող կանայք այսօր ուղեղ են տանջում՝ պարզելու իրանց համար, թէ ի՞նչ դիրք է բռնել Բուլղարիան, կամ ի՞նչ դիրք է բռնելու Յունաստանը։ Բանախօսը մի թռուցիկ ակնարկ է ձգում կանանց հարցի զարգացման պատմութեան վրա և գտնում է, որ հիմնաւորն է կանանց «երկաթէ պահպանողականութիւնը», որի համար իրաւացի մեղադրվում են։ Ներկայ պատերազմի բռնկումով կանայք ստացան նոր գիտակցութիւն, թէ իրանք պէտքական են. գիւղերում կանայք փոխարինեցին զէնքի կանչվածներին. գեղջկուհին սկսեց կատարել գիւղատնտեսական աշխատանքներ. այդ նա անում էր և առաջ. այնպէս որ դա նորութիւն չէր նրա համար։ Բայց քաղաքացի կանայք բոլորովին այլ դրութեան մէջ ընկան. նրանք անօգնական էին, սովոր էին պատրաստված, անհոգ կեանքի. և յանկարծ նրանք զրկվում են նախկինից. այդ զրկվելը հասցրել է մի շարք անհարթութիւններ. ի միջի այլոց և Մոսկվայի անկարգութիւնները սկսվեցին պահեստի զինուորների կանանց շնորհիւ։ Կինը սովոր էր ապրել առանց մտածելու, աւելի ճիշդ՝ նա սովոր էր չը մտածելու. նա այդպէս է դարձել շնորհիւ հանրական իրաւակարգի թելադրանքներին և օգտին. կնոջը հեռու են պահել հանրական գործերից. բանեցրել են նրան միայն սև աշխատանքների համար։ Բանախօսը թւում է կանանց ցոյց տուած մասնակցութիւնը այս պատերազմին, հաստատում է, որ կինը ևս կըռւում է, աշխատում է գործարաններում և հիւանդանոցներում, տուել է մի քանի մարտիկներ, որոնք տղամարդու տոկունութեամբ դիմանում են բոլոր ռազմական զրկանքներին. բայց նա դէմ է կանանց՝ իբր ռազմիկ ոյժեր պատերազմին մասնակցելուն։ Գթութեան քոյրերի մասին նա ընդհանրապէս լաւ դրուատանքներ է տալիս. նկատում է միայն, որ գթութեան քոյրերը մեծ մասամբ լինում են դեռատի օրիորդներ, ծիծաղում են, զբօսնում են ավտոմոբիլներով, բայց պարտականութեան և աշխատանքի ժամերին իրանց գործի գլուխն են անցնում, մոռանալով հաճոյքը։ Հասարակական աշխատանքի երկրորդ մասի ազգաբնակութեան պարենաւորման համար կանայք չեն արել ինչ որ պէտք էր. ռուս կինը հեռու է մնում կօօպերատիվ միութիւններից. նա շփոթվել է, կարկամել է համատարած թանգութիւնից. բայց նկատվում են ուրախալի դէպքեր. պատերազմի շնորհիւ սթափվում են թմրածները, հետաքրքրվում են հանրական խնդիրների կառուցուածքով։ Բանախօսը իր խօսքը վերջացնում է մի ներշնչված և անկեղծ հաւատով, որ կանայք զարգացման երկար և տառապալից ճանապարհը անցնելուց յետոյ կը հասնեն իրանց ցանկալի կայանը։ Այսօր հայ կինը տուժում է Վիլհէլմի շնորհիւ, ռուս կինը զրկվում է իր ամուսնուց, որ կռւում էր Գալիցիայում, նեգր կինը Աֆրիկայից Եւրոպա է ուղարկում իր ամուսնուն, որ գայ և սահման դնէ գերմանական առաջխաղացմանը... այս բոլորը անհետևանք չէ կարող անցնել. սա առաջացնելու է ներքին մտքերի մի յեղաշրջում... Դիակների բլուրները, արիւն և աշխատանքի մեծաքանակ վատնումը կազմակերպելու են վաղվայ օրը. այդ օրը կազմակերպման միջոցին պէտք է լսվի և կնոջ ձայնը. կինը հանդէս պէտք է գայ՝ հանրական իրաւակարգին տոն տալու համար։

Բանախօսութիւնից յետոյ դահլիճը ջերմապէս ծափահարում է տիկնոջը։ Ջրայցին խօսում են Նակաշիձէն և ուրիշներ, որոնց պատասխանում է բանախօսը։ Զ.

ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ԵՐԵԽԱՆԵՐԸ

Մոսկվա, 27 հոկտ.

Այս վերնագրով մի երեկոյթ տրվեց ամսիս 26-ին տեղիս Պոլիտեխնիկական Մուզէյի մեծ լսարանում։ Երեկոյթի ամենից հետաքրքրական մասը կազմում էր պրիվատ-դոցենտ Ռուբինշտէյնի դասախօսութիւնը, որը կրում էր միևնոյն վերնագիրը՝ «Պատերազմը և երեխաները»։ Ահա այդ դասախօսութեան բովանդակութիւնն է, որ մի փոքր մանրամասն ուզում ենք հաղորդել «Մշակի» ընթերցողներին։

⁂

Մենք ապրում ենք այժմ այնպիսի օրերում, երբ ամենակարեւոր հարցերը լուծողը հանդիսանում է բիրտ ոյժը։ Ինքնադիտողութիւնը, ինչպէս և երևոյթների ճշգրիտ գնահատումը, աւելի քան դժուարացել են ներկայումս. այն ինչ՝ նորմալ պայմաններում, դրանք միշտ մատչելի են եղել մեզ։ Թէև ժամանակաւոր, բայց ակնյայտնի մի իրողութիւն է, որ ներկայումս ինչպէս մեզ մօտ, այնպէս և կուլտուրական Եւրոպայում մոռացութեան է տրված կուլտուրական մարդու անհատը, շատ յաճախ ոտնատակ են անում նրա ամենատարրական իրաւունքները։ Պատերազմող բոլոր կողմերն էլ խօսում են յանուն մարդկութեան. ունենալով բոլորովին ուրիշ դրդապատճառներ և մարդասիրական շղարշով ծածկելով դրանց՝ նետվում են կռուի ասպարէզը։ Այդ դէպքում միակ մխիթարականն այն է, որ յամենայն դէպս կուլտուրական մարդը ճանաչվում է պաշտպանվելու և գնահատվելու արժանի։

Կանցնեն այս օրերը, կը վերջանայ պատերազմը, և մեր առաջ կը ցցվեն նրա հետևանքները։ Որտե՞ղ ենք փնտռելու մենք մեր շահը կամ կորուստը. մի կտոր հողի, մեր ձեռք բերած կամ կորցրած մի քանի նահանգների, ծովամասի մէջ. ո՛չ. այդ բոլորը արտաքին պայմաններ են և զուրկ բարձր նշանակութիւնից։ Պատերազմի իսկական հետևանքները մենք պիտի փնտռենք մեր ներսում, մեր հոգու, մեր ապրումների, հասկացողութիւնների մէջ։ Ինչպէ՞ս պիտի կոփվի մեր ապագան. ահա այն հսկայական հարցը, որ կանգնած է մեր առաջ։ Պլատոնն ասում էր՝ «Ասացէք ինձ, թէ ի՛նչ վիճակի մէջ են ձեր դպրոցները, ես ձեզ կասեմ, թէ ի՛նչ վիճակի մէջ է լինելու ձեր պետութիւնը»։ Իսկապէս, մեր ապագան՝ մեր երեխաներն են. նայած թէ ի՛նչ միջավայր ենք ստեղծում նրանց համար, ըստ այնմ կը կազմվեն նրանց հասկացողութիւններն ու ապրելակերպը։ Ի՞նչ ենք շահելու, եթէ մի կտոր հող ձեռք ձգելու ակնկալութեամբ մեր երեխաների կուլտուրական և բարոյական կեանքը վտանգի ենք ենթարկում։

Հռոմէական կայսրութիւնը իր ժամանակին նուաճեց Հելլադան, բայց իսկական յաղթութիւնը տարան յոյները. Հռոմը խոնարհվեց նրանց կուլտուրայի առաջ և դարձաւ վերջիններիս աշակերտը։ Յետագայում էլ երբ գերմանները նուաճեցին հռոմէական կայսրութիւնը, իրանց հերթին տեղի տըւին և ենթարկվեցին յունա-հռոմէական կուլտուրային։

Ահա թէ ինչ կէտի վրա պէտք է յառենք մեր ուշադրութիւնը։

Չը կարծէք, թէ մեր երեխաների խելքը բան չէ կտրում, չեն իմանում, թէ ի՛նչ է կատարվում մեր չորս կողմը։ Այն բոլոր ապրումները, որ պատերազմի պատճառով առաջացել են մեր մէջ, խլրացնում են և մեր երեխաները, ի հարկէ առանձին վերամշակութեան ենթարկելով. այդ ապրումներին նրանք տալիս են աւելի միամիտ և յանդուգն բնոյթ։ Այս դրութիւնը շատ վըտանգաւոր է և պահանջում է մեզանից շատ զգոյշ և լուրջ վերաբերմունք։ Մեր մօտակայ անցեալի պատմութիւնը ցոյց է տալիս, որ պատերազմները շատ են ազդում երեխաների վրա. 70-ական թւականների և ճապոնական պատերազմները բաւականին յուզել են մանուկ սերունդը. դպրոցներում դասերը կանոնաւոր չեն ընթացել. դէպքեր են եղել, երբ ամբողջ դասարանը խմբովին յայտնել է, որ դասը շարունակելու վիճակի չէ։ Մեր ունեցած անյաջողութիւնները միշտ տխրեցրել են նրանց։ Պետական Դումայի բացվելն ու փակվելն անգամ մեր երեխաների համար դատողութիւններ տալու կամ տխրելու առիթ է հանդիսանում։ Երեխաների շրջանում արած մանրամասն դիտողութիւնները և վերջերս հաւաքած բազմաթիւ փաստերը պարզօրէն մեզ ասում են, որ ներկայումս հասարակական տրամադրութիւնների ծանրաչափը (բարոմետր) հեշտութեամբ կարող ենք գտնել այդ շրջանում. երեխաները իրանք և իրանց խաղերը՝ պատերազմի իսկական մարմնացումն են։

Պատերազմի դաշտից եկած վիրաւոր զինուորը փողոցի մի անկիւնում մանրամասն պատմում է իրանց գլխին եկածը. նրան շրջապատող ունկնդիրների կէսից աւելին երեխաներ են, որ լարված լսում են բոլոր պատմածը։ Ի՞նչ է պատերազմը երեխաների կարծիքով. մի մեծ չարիք, մի ծանր և կործանարար երևոյթ, որի հետևանքներն են՝ թանգութիւն, խեղճութիւն և մահ։ Այս հայեացքն աւելի է ամրապնդված մանաւանդ այն երեխաների մէջ, որոնց մայրը զրկվել է իր մի հարազատից և միշտ տխրում է։ Բայց այստեղ էլի օգնութեան է հասնում և յաղթում երեխայական լաւատեսութիւնը. նրանք շատ անգամ պատերազմի այս տխուր կողմերը մի կողմ են թողնում և աւելի կերակրվում են նրա հերոսական պատկերներով. արկածներ, քաջագործութիւններ, զէնք—ահա երեխաների ոգևորողը։ Ովքեր տանջվող վիրաւոր զինուորներ չեն տեսել, վատ են պատկերացնում պատերազմի սարսափները և մեծ եռանդով ձգտում են դէպի կռիւը։

Պարբերականների հետ մշտական կապ պահպանելը մեր երեխաների համար արդէն պահանջ է դարձել. «Ի՞նչ նորութիւն կայ թերթում»,—հարցնում են մեծերին, հէնց որ վերջիններս թերթը վեր են առնում կարդալու։

Երեխաները լաւ գիտեն, թէ այս րոպէիս ի՛նչ վիճակի մէջ է Բէլգիան, Ռուսաստանը կամ Սերբիան։

Անցեալ տարի երբ մեզ մօտ բնակարաններ էին դատարկում վիրաւոր զինուորների համար, երեխաները շատ օգնեցին այդ գործում. իրանց ծնողներից պահանջում էին, որ դատարկեն ընդունարանը, իրանք էլ հրաժարվում էին մանկանոցից։ Վիրաւորների համար երբ նուէրներ էին հաւաքվում, այդ դէպքում էլ նրանք ջերմ մասնակցութիւն ցոյց տուին։

Երեխաները լաւ լսում են թերթավաճառների արդէն ծիծաղելի դարձած աւետախօսները, լսում են մեծերի տուած դատողութիւնները և մամուլի մէջ արտայայտված մտքերը։ Մի ժամանակ փողոցն էր իր թոյնը թափում մեր երեխաների մտքի մէջ, այժմ՝ դեղին մամուլը, կոյր և ազգամոլ մարդիկ, փողոցում վաճառվող զազիր պատկերներն ու բացիկները։ Ընտանիքը չի կարողանում ընկճել երեխային, յաղթողը դըրսի ծանր միջավայրն է։ Ո՞վ չի տեսել երեխաների կազմած կամաւորական խմբերը, նրանց զօրաշարժն ու մարզանքները։ Պատահում եմ այդ խմբերից մէկին և կարդում նրա դրօշակի վրա հետևեալը. «Յաղթութեան մասին իմանալ այստեղ». խընդրում եմ, որ ինձ բացատրեն այդ նախադասութեան իմաստը։ Նրանցից մէկն ասում է. «Մեր թերթերը միշտ գրում են, որ մենք ենք յաղթում. գերմանացիների թերթերը գրում են, որ իրանք են յաղթում. մեր կարծիքով՝ երկուստեք ստում են. իսկական տեղեկութիւններ տուողը մենք ենք լինելու այսուհետև»։

Երեխաների կարծիքը գերմանացիների մասին ընդհանուր առմամբ հետևեալն է. «Նրանք լաւ են անում, որ պաշտպանում են իրանց երկիրը. բայց շատ վատ է, որ նրանք այդպիսի զարհուրելի գազանութիւններ են անում, տաճարներ են կործանում, գիւղեր հրդեհում։ Ջէ որ գերմանացիները լաւ էին ապրում, էլ ինչու պատերազմ յայտարարեցին. նրա համար, որ նրանց թագաւոր Վիլհէլմը և նրա որդին ուզեցին մի-մի Նապոլէոն դառնալ (մամուլի ազդեցութիւնն է)։ Պատերազմից յետոյ պէտք է անպատճառ պատժել Վիլհէլմին և աքսորել ս. Հեղինէ կղզին»։ Մի անգամ երեխան բացիկներով թղթախաղ է խաղում. ցոյց է տալիս մօրը մի բացիկ և հարցնում է. «Մայրիկ, սա Վիլհէլմիշկա՞ն է» (Վիլհէլմ բառի ստորացուցիչ ձևը). երբ դրական պատասխան է ստանում, Վիլհէլմին աքսորում է, գցում բոլոր թղթերի տակը. նոյն ձևով է վարվում և ազգային տարազ հագած երկու գերմանուհիների հետ։ Մայրն ասում է. «Ինչու ես այդպէս վարվում, չէ որ դրանք էլ ունեն այնպիսի երեխաներ, ինչպիսին ունի քո մայրիկը»։ «Միևնոյն է,—պատասխանում է երեխան,—նրանք այդ պատժին արժանի են. նրանք մեզ շատ ցաւ են պատճառել»։ Բայց յետոյ երեխան գաղտագողի հանում է գերմանուհիների նկարը և դնում միւս նկարների շարքում. նրան հարցնում են, թէ ինչու այդպէս վարվեց, նա կրկնում է իր մօր խօսքերը...

Մեր տուած հարցերից երևում է, որ երեխաները բոլորն էլ ուզում են ակտիվ մասնակցութիւն ունենալ, տղաները ուզում են դառնալ կռւող զինուոր, իսկ աղջիկները՝ գթութեան քոյր։

Դպրոցների մէջ մեր երեխաները սկսեցին ատել իրանց այն ընկերներին, որոնք մեր դէմ կռւողներին ցեղակից էին. շատ յաճախ բանը վերջանում էր կռւով։ Մի քանի դպրոցներում սակայն նման դէպքեր ամենևին չը պատահեցին շնորհիւ ուսուցիչների լուրջ ուշադրութեան։ Սրանից մենք կարող ենք հետևցնել, որ դպրոցը էլի կարող է պաշտպանել երեխային՝ դրսի կործանարար ազդեցութիւնից։ Ծնողներն էլ պէտք է աշխատեն. չէ կարելի երեխաներին միայն դպրոց ուղարկել և ասել. «Թող նրանք կրթեն»։

Գերմանացիք էլ այժմ թունաւորել են իրանց երեխաների մտքերը՝ ներշնչելով նրանց մի ազգայնամոլ և ստորատեսակ ոգի. չը կարծէք թէ դա շատ թանգ չէ նստելու.

գերմանական կուլտուրայի զարգացման վրա։

Մեր անելիք բոլոր նուաճումներն անպէտք են, եթէ մեզ արժանի յաջորդներ չունենանք, եթէ նրանք խոր ատելութիւն են տածելու մարդկութեան մի որոշ մասի վերաբերմամբ։ Երեխաները զգայուն են. աշխատենք նրանց վրա ազդել աւելի լաւ կողմից, աշխատենք սերմանել նրանց մէջ այնպիսի մտքեր, որոնք կարող են ապահովել մեր կուլտուրական, հոգևոր յաղթանակը։ Մ. Ոսկերչեան

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Նոյեմբերի 10-ին Արքունական թատրոնում կայանալու է ռուս ժողովրդական յայտնի երգչուհի Պլեվիցկայայի մի համերգը։ Երգչուհին երգելու է նաև ռազմի երգեր։

Տոմսակները համարեա բոլորը վաճառված են, չը նայած նրանց բարձր գներին։

ԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Լոնդոնում այս տարվայ սեպտեմբեր ամսից սկսել է հրատարակվել մի նոր ամսագիր «Twenteeth Century Russia and Anglo-Russian Review» անունով։ Այս հրատարակութեան նպատակն է մերձեցում և ծանօթութիւն հաստատել Անգլիայի և Ռուսաստանի միջև։ Առաջին գիրքը, որ արդէն ստացվել է Ռուսաստանում, կազմված է մեծ մասամբ անգլիերէն յօդուածներից՝ ռուսների մասին. վերջում ունի յաւելուած ռուսերէն լեզուով։ Անգլիական մասը կազմված է բաւականին զանազանակերպ։ Բացի մի շարք յօդուածներից («Ռուսաստանը և իր հարստութիւնը», «Ռուսների հոգեբանութիւնը», «Գերմանական կապիտալը Ռուսաստանում» և այլն) կայ մի յօդուած, որ կրում է այս վերնագիրը. «Անգլիացիները և ռուս գրականութիւնը»։ Այդ յօդուածում կան հետաքրքրական տեղեկութիւններ ռուս գրողների մասին, որոնք յայտնի են Անգլիայում։ Յօդուածագիրը գրում է ի միջի այլոց. «Դոստոեվսկիից, Տուրգենևից և Տոլստոյից յետոյ մեծ աջողութիւն ունեցաւ Գորկին։ Վերջին տարիները սկսել են թարգմանել Չեխովին, Կուպրինին և Լէօնիդ Անդրէեվին։ Վերջերս Անգլիայում երևացին Արցըբաշևի («Սանին») և Սոլոգուբի գրուածքների թարգմանութիւնները։ Առաջինը շատ մերկազմանի է անգլիական հասարակութեան համար և քննադատութիւնը սաստ արտայայտվեց նրա մասին, բայց Սոլոգուբի պատմուածքները ընդունվեցին սրտաբացութեամբ։ Պատերազմի այս օրերին անգլիացիների հետաքրքրութիւնը դէպի ռուս գրականութիւնը աճել է նշանաւոր չափով։ Այժմ սկսել են թարգմանել Շչեդրինին, Գրիգորովիչին։ Բայց դժբաղդաբար անգլիացիները բոլորովին ծանօթ չեն ռուս բանաստեղծութեան հետ։ Պուշկինի գրուածներից թարգմանված է «Капитанская Дочка», իսկ Լերմոնտովին անգլիացիները ծանօթացան 2 տարի առաջ, երբ թարգմանվեց նրա «Герои нашего времени».

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ախալքալաք, 3 նոյեմբերի

Ախալքալաքի հայոց ծխ. դպրոցների վարչութիւնը յայտնում է ի գիտութիւն հայ հասարակութեան, որ իր խնամքին յանձնված դպրոցում սովորում են հարիւրից աւելի գաղթական երեխաներ, որոնք միանգամայն զուրկ են զգեստից և դասական պիտոյքներից. հրաւիրում ենք բարեբար անձանց ուշադրութիւնը. նուէրներ ուղարկել դպրոցի վարչութեան անունով։

Гор. Ахалкалаки, Инспектору Ахалкалакскихъ Армянскихъ Приходскихъ училищъ.

Տեսուչ՝ Իսահակ Տէր-Ղազարեան
Քարտուղար՝ Վ. Կարապետեան

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ԿՈՂՄՆԱԿԻ ՀԱՂՈՐԴԱԳԻՐ.

I

Օրիորդ Արեգնազան Վարդապետեան (Վանի Մեծ-Քէնտիրճի թաղից), 27 տարեկան, կորած է յունիսի վերջերը՝ գաղթի ժամանակ Արծափի ճանապարհին (երբ թէ Իգդիր տեսել է մի ոմն)։ Նրա տեղը իմացողները բարի լինեն իմացնելու այս հասցէով.—Թիֆլիս, Սամավօլնայա փող. № 92, Գայիանէ Վարդապետեանին։

II

Վանի գաղթի ժամանակ Թիֆլիս են ժամանել Վան քաղաքի Մեծ-Քէնտիրճի թաղը բնակվող Իգարեր Վարդապետեանը իր զաւակների՝ Կարապետի ու Գայիանէի հետ և Կալիփսէ Վարդապետեանը։ Նրանք խնկի չը գիտեն, թէ ներկայումս որտեղ են Բաղդասար և Յովհաննէս Վարդապետեանները, որոնք առաջ գտնվում էին Ցրէկնո քաղաքում (Ամերիկա)։ Խնդրվում է վերջիններիս տեղը իմացողներին յայտնել հետեւեալ հասցէով—Թիֆլիս, Սամավօլնայա փ. № 92, Գայիանէ Վարդապետեանին։

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Պուշկինի, Վորոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12½ ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծաղկահատ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի կոկորդի և քթի հիւանդութ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երեքշ., հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—192

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ГЕМОРРОЙ
ЗАПОРЪ
КАТАРРЪ ЖЕЛУДКА
ИЗЛѢЧИВАЕТЪ РАДИКАЛЬНО, ИСКЛЮЧИТЕЛЬНО
Пилюли „КАТАГЕМО"
М. ДЕЛАМУРЕ.
ПРОДАЖА ВЪ ЛУЧШИХЪ АПТЕКАХЪ И ВЪ АПТЕКАРСКИХЪ СКЛАДАХЪ. ИСКЛЮЧИТЕЛЬНЫЙ СКЛАДЪ ДЛЯ ВСЕГО КАВКАЗА ЛАБОРАТОРІЯ М. ДЕЛАМУРЕ ТИФЛИСЪ ЭРИВАНСКАЯ ПЛ. ПУШКИНСКАЯ 3, ВЕРХНІЙ ЭТАЖЪ.
(Հ. կ.) 761. 50—5

Յ. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ
ՌՈՒՍ-ՀԱՅ ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ գ. 8 ր.։
ՀԱՅ-ՌՈՒՍ ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ, գինը 6 ր.։
ՌՈՒՍԵՐԷՆԻ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ և ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ, պատկերազարդ, պրոպիսներով հայ ծխակ. ուսումնարանների համար, Ա. տարի, գինը 20 կ., կազմած լաւագոյն մեթօդով։ Բ. տարի, գինը 40 կոպ.։
ՌՈՒՍԵՐԷՆԻ ԻՆՔՆՈՒՍՈՅՑՆԵՐ—Ա. մաս, գ. 25 կ., Բ. մաս, գ. 40 կ.։
ՍՏՈՅԳ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, ընդարձակ, պատկերազարդ, Ա. մաս, գինը 50 կ.
ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՔՆՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, գինը 50 կ.։
Դիմել հեղինակին՝ А. ДАГБАШЯНУ. г. Тифлисъ. Давидовская, № 22.
(կ.) 793. 2—2

Նպաստամատոյց Ընկերութեան գրասենեակում վաճառվում են
ՅՕԳՈՒՏ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ
Линчъ—Арменія շքեղ հր. 2 հատ. գ. 18 ր.
1906 և 1909 թ.թ. Գեղունի, շքեղ հրատ. 2 ր.
Բժ. Վ. Արծրունի—Պատրանք, վէպ. 1 ր.
» Մանիչ, պատմուածք 40 կ.
Շիրվանզադէ—Ցաւագարը եւ Ընուի ականջը, պատմուածքներ (հեղինակի կենսագրութեամբ և պատկերով)։ 50 կ.
» Ժողովածու երկերի I, II, III, և IV հատոր ամեն մինի գինն է 1 ր. 50 կ.
М. Алавердянъ—Идеологи освобожденія турецкихъ армянъ 40 կ.
Ив. Гнуни—Мотивы армянской поэзіи 40 կ.
Ив. Саркисянъ—Армянск. литература 60 կ
Վարդան Քամալեան—Հառաչանք (երկրորդ տպագրութիւն) 30 կ.
Բ. Իշխանեան—Գերմանիայի եւ Թիւրքիայի տնտեսա-քաղաք. փոխ-յարաբերութիւնները 25 կ.
Նապօլեական պատկերներ հատը 50 կ.
Գր. ս.-ր. Մանդակունի—Հանրամատչելի բժշկարան (բժշկապետ Ռէստէնի բժշկարանից կազմած)։ 1 ր.
Ս. Դոմբէլ-Բէկ—Կանանց հարցը 20 կ.
Ա. Քըրմիբեան—Վարդավառ, գր. 2 արարուածով. 20 կ.
Զարքաչ—Զատկական զառներ 10 կ.
Ա. Աթայեան—Սիրոյ հովիտը 3 կ.
Յիշեալ բոլոր հրատարակութիւնները մեծաքին պահանջողներին կը լինի զեղչ 25%։
Մինչև 1 ռուբլի գամարի գրքերի ճանապարհածախսը Ընկ. վրա։
Դիմել՝ Тифлисъ, Обществу Вспомоществованія на случай бѣдствій «НПАСТАМАТУЙЦЪ» (Соломоновская, 21).
(օ. մ.) 244. 15—3

ՎԵՐՋ ՄԱՐԴԿԱՆՑ ՏԱՌԱՊԱՆՔՆԵՐԻՆ
ՏՐԻՊԵՐԻ (սուսանակ) ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Սուսանակը մի քանիսի կարծիքով անբուժելի հիւանդութիւն է, իսկ մի մասի էլ՝ թէև բուժելի, բայց պահանջում է երկար ու ձիգ ժամանակ և նիւթական մեծ ծախք, բացի բարոյական տանջանքներից։ Այժմ այդ հիւանդութիւնը բժշկվում է երեք շաբաթվայ միջոցում «Ռապիդ» միջոցով, որ ես եմ հնարել և թոյլ է տրված բժշկական խորհրդով № 1295 վկայաթղթով։

Այս միջոցը հինգ տարվայ ընթացքում բուժել է մի քանի հազար հիւանդների և մեծ անուն հանել թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում։ Բայց մինչև այժմ էլ կան հիւանդներ, որոնք կասկածով են վերաբերվում իմ յայտարարութեանը։

Այս կասկածանքը բնական է, որովհետև վերջին մի քանի տարիներում այնքան «հրաշագործ» դեղեր են ի վաճառ հանվել, որոնք շուտափոյթ բուժումն են խոստանում, որ հիւանդը կարդալով յայտարարութիւնները ոչ միայն ըղձուարանում է դրանցից ընտրել, այլ և սկսում է կասկածել նրանց տուած խոստումների վերաբերմամբ։

Թուզէ շատ հիւանդներ փորձել են մի քանի դեղեր և՝ թուզէ՝ հիասթափվել նրանց ներգործութեան ու խոստումների վերաբերմամբ, բայց դա չէ նշանակում, որ բոլոր դեղերն էլ այդպէս են։ Իմ առաջարկած միջոցը երեք շաբաթվայ ընթացքում բուժում է այս հիւանդութեանը ամենահնացած տեսակը։

Հինգ տարվայ ընթացքում ես ստացել եմ մեծաքանակ շնորհակալական նամակներ, որոնք ինձ թոյլ են տալիս յայտնելու, որ «Ռապիդ» գործ ածելու ժամանակ չը բուժելու դէպք չէ եղած և իւրաքանչիւր հիւանդ, որ գործ է ածել երկու կրկնակի սրուակ «Ռապիդ», անպայման առողջացել է, որքան որ հիւանդութիւնը տևած լինէր։

Հիւանդների ուշադրութիւնն եմ հրաւիրում այն հանգամանքի վրա, որ իմ հաւատարիացումը «Ռապիդ» միջոցի մասին և իմ խոստումները ի զուր չեն, ի հաստատութիւն որի Թիֆլիսի բաժանմունքից ամեն մի 2 սրուակ ապսպրողի (բուժման ամբողջ կուրսը) ես ձրի ուղարկում եմ դեղի հետ միասին ՊԱՐՏԱՒՈՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ, ՓՈՂԸ ԵՏ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ, եթէ գրվողը չը բժշկվի։ Այս թղթի պատճէնը այս է.

«Ես, ի ներքոյ ստորագրողս, տալիս եմ այս թուղթը պարոն այս-ինչին այն բանի համար, որ ծախելով նրան «Ռապիդ» պրեպարատի 2 կրկնակի սրուակ հօնօրէյի դէմ, երաշխաւորում եմ, որ 20-օրեայ գործածութիւնից յետոյ՝ նրա հիւանդութիւնը բոլորովին կանհետանայ։ Եթէ այդ ժամանակամիջոցում, նրա հիւանդութիւնը, լաբորատորիայում նրա մէզը քննութեան ենթարկելուց յետոյ, բուժված չը լինի, այն ժամանակ 9 ր. պարտաւոր եմ վերադարձնելու։

Աւելի լաւ համոզվելու համար ես վճռեցի ամեն մի յայտարարութեան մէջ տպագրել նորանոր շնորհակալական նամակներ։ Այս նամակների իսկականները պահվում են ինձ մօտ և ցանկացողները կարող են միշտ էլ տեսնել։ Այս նամակների իսկութեան համար ես պատասխանատու եմ և դրանց կեղծութիւնը ապացուցանելու դէպքում ես պատրաստ եմ վճարել 1000 ր., որևէ բարեգործական նպատակով։

Մեծ. պ. Դէլամուրէ! Խնդրում եմ ներել ինձ, որ մինչև օրս չը կարողացայ տեղեկացնել ձեզ «Ռապիդ» պրեպարատի պատճառած հետևանքների մասին։ Հօնօրէյ հիւանդութիւնը ինձ ամբողջ 14 տարի տանջում էր։ Հէնց որ սկսեցի ձեր «Ռապիդ» պրեպարատը ընդունել, ես սկսեցի իմ հիւանդութեան վերաբերմամբ փոփոխութիւն նկատել, և այժմ ինձ միանգամայն առողջ եմ զգում։ Շնորհակալ եմ ձեզանից, պ. Դէլամուրէ, ձեր հրաշագործ դեղի մասին։ Թող Տէրը ձեզ երկար կեանք պարգևէ։ Խորին յարգանքով՝ Լ. Ն. Վ.։ Օդեսսա։

Երկու կրկնակի սրուակի և մի արկղիկ պիլիւլների (լրիւ բժշկվելու կուրսը) գինն է 9 ռուբլի։ Վերադիր վճարով և ճանապարհածախսով 10 ռուբլի։ Վերադիր վճարով ուղարկվում է 3 ր. կանխավճար ստանալուց յետոյ։

Պատուէրները հասցէագրել միմիայն.
Въ Кавказское отдѣленіе Московской лабораторіи М. Деламурэ, Тифлисъ, Эриванск. пл., Пушкинская, 3, отд. 2/М, верхній этажъ, противъ Городской Управы, д. Кредитнаго О-ва.
Հեռագրական հասցէն՝
Тифлисъ—Американецъ.
(կ.) 609. 50—10

ПРИ ГОНОРРЕѢ
въ острой и хронической формѣ, а также ея послѣдствіяхъ съ громаднымъ успѣхомъ примѣняется испытанный въ теченіе долгихъ лѣтъ препаратъ
„АРМАТИНЪ" А. Я. АКУЛІАНЦА
для внутренняго употребленія. „Арматинъ" совершенно безвреденъ для организма и одинаково успѣшно примѣнимъ къ мужчинамъ и женщинамъ. При употребленіи „Арматина" не требуется никакихъ спринцеваній, промываній, прижиганій, бужированій и т. п.
ПРЕДОСТЕРЕЖЕНІЕ. „Арматинъ" А. Я. Акуліанца вызвалъ на рынкѣ разнаго рода грубыхъ и вредныхъ для организма поддѣлокъ, а потому просятъ г.г. покупателей быть особенно осторожными при покупкѣ и требовать „Арматинъ" только А. Я. Акуліанца съ этикетомъ бѣлая ромашка. Цѣна 1 кор. 1 р. 75 к. Продажа въ аптекахъ по рец. вр. Аптекамъ, аптек. складамъ, лечебницамъ и пр. лечебн. учрежд.—скидка на главн. складѣ А. Я. АКУЛІАНЦА. Москва, Уланскій п. 21.
174. 0—65 (հ. կ.)

! Զգուշացէք կեղծիքներից !
ՊՐՕՎԻԶՕՐ
Г. Ф. Юргенсъ-ի
Բօրաօ-Տիմօլեան Սապօն
Քրտինքի, այրուածքի, պէպէնների, ուզրինների, պզուկների և դեղին խալերի դէմ։
ՏՈՒԱԼԷՏԱՅԻՆ-ԱՆՈՒՇԱՀՈՏ ՍԱՊՈՆ ԲԱՐՁՐ ՏԵՍԱԿԻ։
Վաճառվում է ամենուրեք.
կտորը 50 կոպէկ, կէս կտորը 30 կոպէկ։
(կ.) Г. 26—15
Ոսկէ մեդալ Լօնդօն 1893 թ.
Ֆիրմա պրովիզոր Г. Ф. Юргенсъ.

Լոյս տեսաւ և վաճառվում է
Դ. ՂԱԶԱՐԵԱՆԻ
ՁՈՅԳ ԱՉԵՐ
(ԴՈՒԷՏԸ)
Սօպրանօյի և մեցցօ-սօպրանօյի համար, դաշնամուրի ձայնակցութեամբ։
Հրատարակութիւն Ս. ՄԵԼՔՈՒՄԵԱՆԻ։
Գինն է 30 կոպ.
Դիմել՝ Թիֆլիսի գրավաճառանոցներին։
(հ.կ.) 798. 4—2

ԲԺՇԿ. ՖԵԼԴՇԵՐ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Բժիշկների որոշմամբ՝ արկումներ, մասսաժ ձեռքով և էլեկտրականութեամբ հիմնաւոր բժշկութիւն սուր եւ խրօնիքական տրիպէրի, փափուկ ու կոշտ շանկրի, սեռական թուլութեան եւ անկարողութեան բժշկութիւն նորագոյն ձևերով. բժշկական-առողջապահական խորհուրդներ։ Եկւոր օտար քաղաքցի հիւանդներին առաջնորդում եմ մասնագէտ հմուտ բժիշկների մօտ և ըստ ցանկութեան՝ ինձ մօտ կազմակերպում եմ կօնսիլիում (բժշկ. խորհրդակցութիւն)։ Օտարերկրացիներին ուղարկում եմ խորհուրդներ և ռեցեպտներ 3 ռուբլի վճարով։ Գաղթականներին ու չքաւորներին խորհուրդը ձրի ինձ մօտ։ Ընդունելութիւնը ամեն օր 3—4 ժամը։ Հասցէ՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Г. ЕСАЯНЦУ.
Ինձ մօտ ծախվում են իմ կազմած 1) «Վեներական ախտերի բժշկարան» բազմաթիւ խորհուրդներով ու ռեցեպտներով, գ. 1 ռուբ. 2) «Փորձանքների բժշկարան», անհրաժեշտ ամեն մի ընտանիքի, գ. 50 կ., 3) «Ծիծաղի ակնոց»՝ անէկդոտներ, գ. 20 կ., 4) «Անկարմատի սովորը», ծիծաղաշարժ վօդըվիլ, գ. 20 կ., 5) «Բաճճի», գ. 10 կ., և ճանապարհի ծախս 20 կոպէկ։
(հ. կ.) 311. 100—53

ՕԳՏՎԵՑԷՔ ՅԱՐՄԱՐ ԱՌԻԹԻՑ
ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՇԷՔԵՐՋԵԱՆԻ
ՀԻՊՆՕՏԻԶՄԻ ԵՒ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՄՏՔԻ ՔԱՋԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ
Գործնական հոգեբանութեան
ԿՈՒՐՍԵՐԸ

Harutiun Shekerjian

Այս նոր կուրսերը մասնաւորապէս պատրաստված են այն նպատակով, որ ընթերցողը կարողանայ սովորել Հիպնոտիզմը առանց ուսուցչի, առանց մեծ ծախքերի և առանց միջնորդի սոսկ մտքի ուժով։
Ընթերցողը Հիպնոտիզմին տիրապետելուց յետոյ՝ կարող է բուժել զանազան տեսակ հիւանդութիւններ, որոնք նշանակված են 32-րդ դասում։
Հիպնոտիզմով կարելի է վերացնել վատ սովորութիւններ երեխաների մէջ. գողութիւն, ծուլութիւն, ծխել, մի խօսքով արմատախիլ անել՝ ինչ որ վատ է, ու ներշնչել՝ ինչ որ լաւ է և օգտակար։
Հիպնոտիզմով դուք կարող էք ուղարկել ձեր ենթակային հեռու վայրեր, ուր գտնվում են ձեր սիրելիները և բարեկամները, որ նրանցից տեղեկութիւն բերի ձեզ։
Հիպնոտիզմով դուք կարող էք, բացի գաղտնիքների մէջ թափանցելուց՝ տալ և ապշեցուցիչ և ծիծաղ առաջ բերող սէանսներ (տեսարաններ)։ Հիպնոտիզմով դուք կարող էք իմանալ ով է վերցրել ձեր իրերը, կամ ուր էք կորցրել կամ թագցրած իրերի տեղը։
Արժէքի և ուրիշ բացատրութիւնների համար պէտք դիմել նամակով հետևեալ հասցէով. СУСАННА ШЕКЕРЖЯНЪ, Вельяминовская ул. № 22, Тифлисъ.
(կ.) 766. 20—3

ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ
ԻՆԺԵՆԵՐ
Տ. Ա. ԲՈՒԴԱՂԵԱՆԻ
Բագու, Կրասնովօդսկայա փ. տ. Աւան-Իզբաշեանցի։ Հեռախօս № № 23-49, 23-50
Առաջարկում է ամբողջ Կովկասի և Պարսկաստանի համար բացառապէս ԴԻԶԵԼ շարժիչներ (մօտօրներ) յայտնի ԿՕԼՕՄԵՆՍԿԻ ընկ. մեքենայագործարանից։
Հօրիզօնական անգլիական շարժիչներ, (մօտօրներ) «ԿՐՕՍԼԷՅ» ընկերութեան մեքենայագործարանից «Դիւրացրած Դիզել» սիստեմի, որ գործ է ածվում նաւթի բոլոր տեսակներով. նաւթի ծախսն է մի ժամում ամեն մի ուժին ½ ֆունտ կամ 200 գրամմ։
Գազային շարժիչներ, որոնք բանում են թէ բնական և թէ գեներատորային գազով։
Ջրհան և ջրմուղ մեքենաներ (նասօսներ)։
Ջրի շարժիչներ (տուրբինաներ)։
Սառոյց պատրաստող մեքենաներ «Ֆէնիքս» ընկ. գործարանից։
Ամեն տեսակ էլեկտրական մեքենաներ և պիտոյքներ յայտնի «Դինամօ» ընկ. գործարանից։
Երկրագործական մեքենաներ՝ լօկոմօբիլներ, ցորեն մաքրող մեքենաներ, տրակտօրներ և այլն՝ յայտնի ամենայն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկեր. գործարանից։
Մեծ ճանապարհի վրա աշխատելու համար ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐ նոյն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկերութեան գործարանից։
Վերոյիշեալ տեխնիքական գրասենեակը իր վրա է վերցնում զանազան գործարաններ սարքել և գործի գցել իր միջոցներով՝ ինժեներներով և վարպետներով։
Դիմել՝ Баку, Техническая Контора Т. А. БУДАГЯНЦЪ.
Արտասահմանից՝ Bacou (Russie) Bureau Technique T. A. Boudaguian, Ingénieur.
(հ.կ.) 551. 150—146

ԱԶԱՏ ՄԱՆՈՒԿԵԱՆ
ՓՆՋԻԿ
24 ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳ 4 ԱՌԱՆՁԻՆ ՏԵՏՐԱԿՆԵՐՈՎ
(Սօլօ կամ ունիսօն խումբ դաշնակի նուագակցութեամբ)
Խմբագրութիւն ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔԵԱՆԻ
Իւրաքանչիւր տետրակի գինը 40 կոպ.։
Վաճառվում են «ԳԻՐ», «ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ», միւս հայ գրախանութներում և Սուգանաճեանի երաժշտական խանութում։
Պահեստը հեղինակի մօտ։ Հասցէն՝ Թիֆլիս, Գայիանեան օրիորդաց ուսումնարան։
(կ.) 791. 4—3

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.